

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՎԱՀԵ ՎԱՂԻՆԱԿԻ

ՎԵՐԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԳՈՎ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ  
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ԺԲ.00.04. - «Դատական իրավունք – դատարանակազմություն, քաղաքացիական դատավարություն, քրեական դատավարություն, կրիմինալիստիկա, դատական փորձաքննություն, փաստաբանություն, օպերատիվ-հետախուզական գործունեության տեսություն» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2015

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

ОГАНЕСЯН ВАГЕ ВАГИНАКОВИЧ

ПРОБЛЕМЫ ПЕРЕСМОТРА СУДЕБНЫХ АКТОВ В АПЕЛЛЯЦИОННОМ  
ПОРЯДКЕ В ГРАЖДАНСКОМ СУДОПРОИЗВОДСТВЕ  
РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

АВТОРЕФЕРАТ

Диссертации на соискание ученой степени доктора  
юридических наук по специальности

12.00.04. – “Судебное право – судоустройство, гражданский процесс, уголовный процесс, криминалистика, судебная экспертиза, адвокатура, теория оперативно-розыскной деятельности”

ЕРЕВАН 2015

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում  
Պաշտոնական ընդդիմախոսներ՝

իրավ. գիտ. դոկտոր,  
պրոֆեսոր Ա. Ա. Մոխով

իրավ. գիտ. դոկտոր,  
պրոֆեսոր Դ. Հ. Վալեն

իրավ. գիտ. դոկտոր,  
պրոֆեսոր Մ. Կ. Յուկով

Առաջատար կազմակերպություն՝ Հայ-ռուսական (սլավոնական) համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը տեղի է ունենալու 2015թ.-ի մարտի 25-ին, ժամը 14<sup>30</sup>-ին Երևանի պետական համալսարանում գործող ԲՈՀ-ի իրավաբանության 001 մասնագիտական խորհրդի նիստում (0025, ք. Երևան, Ալեք Մանուկյան 1):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանի գիտաշխատողների ընթերցասրահում:

Մեղմագիրն առաքվել է 2015թ. փետրվարի 23-ին:

Մասնագիտական խորհրդի գիտ. քարտուղար,  
իրավ. գիտությունների թեկնածու

Ա. Ա. Մանասյան

Тема диссертации утверждена в Ереванском государственном университете

Официальные оппоненты:

доктор юридических наук,  
профессор А. А. Мохов

доктор юридических наук,  
профессор Д. Х. Валеев

доктор юридических наук,  
профессор М. К. Юков

Ведущая организация: Российско-Армянский (Славянский) университет

Защита состоится 25 марта 2015г., в 14<sup>30</sup> часов на заседании специализированного совета 001 по юриспруденции ВАК при Ереванском государственном университете (0025, г. Ереван, ул. Алека Манукяна 1).

С диссертацией можно ознакомиться в читальном зале научных работников библиотеки ЕГУ.

Автореферат разослан 23 февраля 2015 г.

Ученый секретарь специализированного совета,  
кандидат юридических наук

А. А. Манасян

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

**Ատենախոսության թեմայի արդիականությունը:** Յուրաքանչյուր քաղաքակիրթ և իրավական պետության համար քաղաքացիական շրջանառության մասնակիցների սուբյեկտիվ իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանությունն առաջնային նշանակություն ունի: Հետևաբար, իրավական պետություններն ուղղակիորեն պարտավոր են քաղաքացիական շրջանառության մասնակիցների խախտված կամ վիճարկվող իրավունքների և օրինական շահերի պաշտպանության համար այնպիսի գործուն կառուցակարգեր ապահովել, որոնք առավելագույնս կերաշխավորեն նաև վերջիններիս դատական պաշտպանության իրավունքի լիարժեք իրացումը: Հայաստանի Հանրապետությունը (այսուհետ՝ նաև ՀՀ) ևս, հետամուտ լինելով այս գաղափարին, Սահմանադրությամբ (հոդվածներ 1, 5, 18, 19, 91-98 և այլն) ամրագրել է իրավական պետությանը բնորոշ սուբյեկտիվ իրավունքների դատական պաշտպանության հիմնադրույթները, որոնք էլ իրենց հերթին ելակետ են հանդիսանում ճյուղային օրենսդրության ստեղծման, զարգացման և կատարելագործման համար: Ընդ որում, քաղաքացիական շրջանառության մասնակիցների դատական պաշտպանության լիարժեք իրացումն ուղղակիորեն պայմանավորված է դատական իշխանության մարմինների արդյունավետ գործունեությամբ, նրանց կողմից կայացվող դատական ակտերի որակով, որպիսի ապահովման գործում իր ուրույն տեղն է գրավում վերաքննության կարգով դատական ակտերի վերանայման ինստիտուտը, որը հնարավորություն է ընձեռում վերանայել և օրենքով նախատեսված հիմքերի առկայության դեպքում բեկանել (վերացնել) անօրինական և չհիմնավորված (ոչ իրավական) դատական ակտերը: Կարելի է ասել, որ վերաքննության կարգով դատական ակտերի վերանայումը հանդիսանում է քաղաքացիական գործերով պատշաճ արդարադատության իրականացման և առաջին ատյանի դատարանում գործերի քննության օրինականության ապահովման առաջնային նշանակություն ունեցող հիմնական միջոցը:

Գաղտնիք չէ, որ ՀՀ քաղաքացիադավարական օրենսդրությունը ամենաշատ փոփոխությունների ենթարկված ոլորտներից է, որն ուղղակիորեն անդրադարձել է նաև քաղաքացիական գործերով վերաքննության վարույթի իրավակարգավորման առանձնահատկությունների վրա: Ընդ որում, օրենսդրական փոփոխությունները որոշ դեպքերում եղել են այնքան արմատական, որ դրանց արդյունքում փոխվել է քաղաքացիական գործերով վերաքննության մոդելը: Մասնավորապես, 1998 թ. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի ընդունմամբ<sup>1</sup> Հայաստանում քաղաքացիական գործերով կիրառվում էր լրիվ վերաքննության մոդելը, սակայն 2005 թվականի ՀՀ Սահմանադրության փոփոխություններով<sup>2</sup>, երբ վճռաբեկ դատարանն օրենքի միատեսակ կիրառությունն ապահովելու և իրավունքի զարգացմանը նպաստելու խնդիրների իրագործմամբ պայմանավորված ձեռք բերեց սահմանադրաիրավական նոր կարգավիճակ, էապես փոխվեցին նաև ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի գործառնությունները, որպիսի պայմաններում 2007 թվականին ՀՀ դատական օրենսգրքի ընդունմամբ<sup>3</sup> և քաղաքացիական դատավարության օրենսգրքի փոփոխություններով անցում կատարվեց ոչ լրիվ վերաքննության մոդելի: Հարկ է նշել նաև, որ դատաիրավական բարեփոխումների շրջանակներում կատարվող օրենսդրական փոփոխությունները կրում են շարունակական բնույթ, և ներկա պահին զուտ քաղաքացիական գործերով վերաքննության ինստիտուտին վերաբերող

<sup>1</sup> ՀՀՊՏ 1998/20(53), 09.09.98:

<sup>2</sup> ՀՀՊՏ 2005 (հաս. թող.), 05. 12. 05, հոդ. 1426:

<sup>3</sup> ՀՀՊՏ 2007/20(544), 18. 04. 07, հոդ. 489:

երկու տասնյակից ավել օրենսդրական լրացումներ և փոփոխություններ են արվել<sup>4</sup>: Այդուհանդերձ, նույնիսկ վերջին օրենսդրական փոփոխությունների արդյունքում ձևավորված իրավակիրառ պրակտիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ վերաքննիչ վարույթի ներկայիս իրավակարգավորումը հեռու է կատարյալ համարվելուց, քանի որ որոշ դեպքերում օրենսդրական ձևակերպումները հակասական դրույթներ են պարունակում և տարակարծ մեկնաբանությունների տեղիք են տալիս, իսկ մյուս կողմից մի շարք սկզբունքային հարցեր դուրս են մնացել իրավական կարգավորման սահմաններից: Բացի այդ, վստահությամբ կարելի է նշել նաև, որ վերաքննության կարգով դատական ակտերի վերանայման վարույթը թեև ՀՀ քաղաքացիական դատավարության իրավունքի գիտության կողմից ուսումնասիրության արժանացած ինստիտուտներից մեկն է, այնուամենայնիվ հայրենական հեղինակների մոտ գրեթե բացակայում են քաղաքացիական գործերով բուն վերաքննությանը նվիրված ամբողջական և համապարփակ գիտահետազոտական աշխատանքները: Ճիշտ է, խնդրո առարկայի գիտական իմաստավորման նկատառումներով մենք կարող ենք հիմնվել վերաքննության ինստիտուտի ուսումնասիրությանը նվիրված օտարալեզու աղբյուրների վրա, սակայն դրանք չեն կարող ամբողջությամբ արտացոլել ՀՀ օրենսդրությամբ վերաքննության ինստիտուտի իրավակարգավորման և դատական գործունեության առանձնահատկությունները:

Կարևոր հանգամանք է նաև, որ Հայաստանի Հանրապետությունը 20.03.2002 թվականին վավերացրել է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» 1950 թվականի նոյեմբերի 4-ին ստորագրված եվրոպական կոնվենցիան<sup>5</sup>, որի արդյունքում դրանում ամրագրված իրավունքներն ապահովելու պարտավորություն է ստանձնել: Ընդ որում, Կոնվենցիայի կիրառման կապակցությամբ Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքում ձևավորված դրույթները ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի ուժով պարտադիր են դարձել հայրենական իրավական համակարգի համար: Դրա հետ մեկտեղ, ՀՀ սահմանադրական դատարանը մի շարք որոշումներով սկզբունքային իրավական դիրքորոշում է արտահայտել վերաքննության վարույթը կարգավորող նորմերի վերաբերյալ, որպիսի պայմաններում անհրաժեշտ է վերահիմնաստավորել վերաքննության կարգով դատական ակտերի վերանայման ինստիտուտը, իրավակիրառ պրակտիկայում այն դիտարկելով խախտված կամ վիճարկվող սուբյեկտիվ իրավունքների և արդար դատաքննության իրավունքի պաշտպանության իրավական միջոց:

Հարկ է նշել նաև, որ դատական պաշտպանության միջազգային իրավական կառուցակարգերը առավելապես հանդիսանում են ներպետական կառուցակարգերը լրացնող և օժանդակող ինստիտուտ, մինչդեռ չափազանց կարևոր է ապահովել արդար դատաքննության իրավունքի իրականացումը հենց ազգային դատարաններում: ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի 2007-ից 2012 թվականների տարեկան զեկույցների համաձայն՝ մարդու իրավունքների պաշտպանին ներկայացված դիմում-բողոքների քանակական տեսանկյունից պետական մարմինների շարքում առաջատարներից մեկը ՀՀ դատարաններն են՝ միջին հաշվարկով տարեկան 150-ից ավելի դիմում-բողոք: Ընդ որում, 2007 թվականից սկսած (տե՛ս ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի տարեկան զեկույցի «2.2.2. Արդար դատաքննության իրավունք» բաժինը), դատարանների դեմ ուղղված բողոքների մի զգալի մասը վերաբերում է հենց դատավարական օրենսդրության պահանջների խախտումներին, որոնք ցավոք սրտի չեն վերացվել վերադաս դատական ատյան-

<sup>4</sup> ՀՕ-36-Ն, ՀՀՊՏ N 16(315), 24.03.04: ՀՕ-98-Ն, ՀՀՊՏ N 17(541), 28.03.07: ՀՕ-277-Ն, ՀՀՊՏ N66(590), 26.12.07: ՀՕ-233-Ն, ՀՀՊՏ N 76(666), 30.12.08: ՀՕ-44-Ն, ՀՀՊՏ N 9(675), 13.02.09 և այլն:

<sup>5</sup> ՀՀՊՏ 2002.06.05/17(192) Հոդ. 367:

ների կողմից, կամ ավելին, թույլ են տրվել հենց այդ ատյաններում<sup>6</sup>:

Վերոգրյալը պարտավորեցնում է մեզ վերաքննության ինստիտուտի վերլուծության հիմքում դնել այն չափորոշիչները, որոնք բխում են ՀՀ Սահմանադրական և վճռաբեկ դատարանների որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումներից, առաջադրված են Եվրոպական կոմիտեցիայով և դրա կիրառման արդյունքում ձևավորված Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային պրատիկայով:

Կարող ենք վստահաբար նշել, որ քաղաքացիական դատավարությունում վերաքննության կարգով դատական ակտերի վերանայման հիմնախնդիրները բացահայտելը, իրավակիրառ պրակտիկայում դրա առանձնահատկությունները, և այս ինստիտուտի իրավակարգավորումը ՀՀ ստանձնած միջազգային պարտավորություններին, ՀՀ սահմանադրական դատարանի և վճռաբեկ դատարանի որոշումներին համապատասխան գնահատելը լուրջ վերլուծություն են պահանջում, ինչով և պայմանավորված է հետազոտվող թեմայի արդիականությունը:

**Հետազոտության թեմայի մշակվածության աստիճանը:** Խոսելով թեմայի մշակվածության աստիճանի մասին՝ պետք է նշել, որ քաղաքացիական դատավարությունում վերաքննության ինստիտուտի վերաբերյալ տեսական խորը և համապարփակ ուսումնասիրությունները հայկական իրականության մեջ գրեթե բացակայում են, սակայն հայրենական մի շարք հեղինակներ իրենց աշխատություններում որոշ չափով անդրադարձել, վերլուծել են դատական ակտերի վերանայման հիմնահարցերը: Դրանցից հատկապես կարելի է առանձնացնել Ռ.Գ. Պետրոսյանի, Ս.Գ. Մեղրյանի, Գ. Հարությունյանի, Ա.Հ. Դավթյանի, Հ.Մ. Տեր-Վարդանյանի աշխատությունները, որոնք սակայն ամբողջությամբ քաղաքացիական գործերով վերաքննությանը չեն վերաբերվում: Քաղաքացիական դատավարությունում վերաքննության կարգով դատական ակտերի վերանայման ինստիտուտի հետ կապված հարցերը հետազոտության են ենթարկվել ինչպես Յարական Ռուսաստանի, այնպես էլ խորհրդային և ժամանակակից դատավարագետների բազմաթիվ գիտական աշխատություններում: Հետազոտվող թեմային առնչվող հիմնախնդիրները դարձել են նաև թեկնածուական և դոկտորական ատենախոսություններ, որոնք ամբողջությամբ կամ առանձին գլուխներով անդրադառնում են քաղաքացիական դատավարությունում վերաքննության ինստիտուտին: Դրանց շարքում կարելի է նշել Ե.Ա. Բորիսովայի, Վ.Վ. Գրյազեվայի, Լ.Ա. Տերեխովայի, Ե.Ս. Սմագինայի, Ե.Վ. Վասկովսկու, Մ.Ս. Վիկուտի, Գ.Ա. Ժիլինի, Վ.Ս. Կալմացկու, Ն. Մոլի, Դ. Հարիսի և այլոց աշխատությունները:

Չնայած վերոգրյալին՝ պետք է նշել, որ Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում քաղաքացիական գործերով վերաքննության ներկայիս ինստիտուտը դեռևս լիարժեք ուսումնասիրված չէ և դրա վերաբերյալ համընդգրկուն գիտական աշխատությունները բացակայում են:

**Հետազոտության օբյեկտը:** Հետազոտության օբյեկտ են հանդիսանում վերաքննության կարգով դատական ակտերի վերանայման փուլում ծագող դատավարական հարաբերությունները:

**Հետազոտության առարկան:** Որպես հետազոտության առարկա են հանդես գալիս քաղաքացիական դատավարությունում վերաքննության կարգով դատական ակտերի վերանայման ինստիտուտը և առկա հիմնախնդիրները:

**Հետազոտության նպատակը և խնդիրները:** Հետազոտության նպատակը Հայաստանի քաղաքացիական դատավարությունում վերաքննության մոդելի համակարգային ու-

<sup>6</sup> Տե՛ս ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի 2007-2012 թվականների տարեկան զեկույցները, <http://ombuds.am/main/am/10/31/>:

սումնասիրությունն ու վերլուծությունն է, տեսական և գործնական հիմնախնդիրների վերհանումը, կատարված համալիր հետազոտությունների արդյունքների հիման վրա վերաքննության կարգով դատական ակտերի վերանայման վարույթը կարգավորող քաղաքացիական դատավարության օրենսդրության դրույթների կատարելագործմանն ուղղված առաջարկությունների մշակումը, որպիսիք նպաստելու են քննարկվող ինստիտուտը դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքների հիմնադրույթներին համապատասխանեցնելուն, իչնպես նաև ապահովելու են դրա ամրապնդումն ու զարգացումը:

Վերոնշյալ նպատակներին հասնելու համար մեր առջև խնդիր ենք դրել.

- վերլուծել վերաքննիչ վարույթի էությունը և որոշել դրա տեղը դատական ակտերի վերանայման վարույթների համակարգում,
- բացահայտել վերաքննության առանձին տեսակների առավելություններն ու թերի կողմերը,
- բացահայտել Հայաստանի քաղաքացիական դատավարությունում կիրառվող վերաքննության մոդելի առանձնահատկությունները,
- վերլուծել վերաքննիչ բողոքարկման իրավունքի էությունը և իրականացման նախադրյալները,
- իրականացնել վերաքննիչ բողոքարկման իրավունքի նախադրյալները և բողոքարկման իրավունքի պայմանները խախտելու քաղաքացիադատավարական հետևանքների ուսումնասիրությունն ու գնահատումը,
- ուսումնասիրել վերաքննության կարգով դատական ակտերի վերանայման դատավարական կարգը և գնահատել դրա արդյունավետությունը,
- բացահայտել քաղաքացիական դատավարության բնույթը կանխորոշող սկզբունքների գործողության առանձնահատկությունները վերաքննության փուլում,
- հետազոտել վերաքննության կարգով դատական ակտերի բեկանման հիմքերը, դրանց դասակարգման առանձնահատկությունները, ինչպես նաև բացահայտել դատական սխալի և արդարադատության սխալի էությունը,
- վերլուծել վերաքննիչ դատարանի լիազորությունները, դրանց դասակարգման շրջանակներում վերհանել առկա թերությունները,
- գնահատել դատական կամ արդարադատության սխալների վերացմանն ուղղված դատավարական ներգործության միջոցները,
- ուսումնասիրել և դատասակարգման ենթարկել վերաքննիչ դատարանի որոշումները, բացահայտել դրանց էությունը՝ անդրադառնալով ինչպես դրանց ներկայացվող էական և ձևական պահանջների վերլուծությանը, այնպես էլ իրավական գործողության հիմնական հատկանիշներին,
- ուսումնասիրել ՀՀ իրավական համակարգը կազմող իրավական ակտերի, այդ թվում՝ Եվրոպական դատարանի նախադեպերով և ՀՀ սահմանադրական ու վճռաբեկ դատարանների որոշումներով նախատեսված այն դրույթները, որոնք անհրաժեշտ են քաղաքացիական դատավարությունում վերաքննության ինստիտուտի արդյունավետ գործառնությունն ապահովելու համար:

**Հետազոտության տեսական հիմքը:** Հետազոտության տեսական հիմքը ձևավորվել է քաղաքացիական դատավարությունում դատական ակտերի վերանայման ինստիտուտի կամ դրա առանձին հարցերի վերլուծությանը և գիտական իմաստավորմանը նվիրված հայրենական և արտասահմանյան աղբյուրներից: Դրանց շարքում հատկապես կարելի է առանձնացնել Ռ.Գ. Պետրոսյանի, Ս.Գ. Մեղրյանի, Գ. Հարությունյանի, Ա.Հ. Դավթյանի, Հ.Մ. Տեր-Վարդանյանի, Տ.Ա. Մարկոսյանի, Ե.Ա. Բորիսովայի, Վ.Վ. Գրյազեվայի,

Ե.Գ. Գոյդենկոյի, Գ.Ա. Ֆուրսովի, Ի.Վ. Խարլամովայի, Ի.Օ. Պոդվալնու, Ե.Ա. Ստեպանովայի, Ե.Ս. Սմագինայի, Յու.Ա. Տիմոֆեևի, Ն.Ի. Տկաչովի, Վ.Ի. Տորտիչնիկովի, Օ.Վ. Նիկոլայչենկոյի, Ս.Կ. Չայգայնովայի, Ե.Վ. Կարավայեվայի, Ն.Բ. Չեյդերի, Ա.Կ. Կացի, Ա.Ֆ. Կոզլովի, Կ.Ի. Կոմիսարովի, Լ.Ա. Տերեխովայի, Ե.Վ. Վասկովսկու, Ի.Ե. Էնգելմանի, Լ.Ֆ. Լեսնիցկայայի, Ս.Ս. Չավրիևի, Ս.Մ. Ահմեդովի, Վ.Կ. Պուչինսկու, Վ.Վ. Յարկովի, Ա.Տ. Բոների, Մ.Կ. Տրեուշնիկովի, Ի.Վ. Ռեշետնիկովայի, Տ.Ն. Նեշատաևայի, Մ.Ս. Վիկուտի, Մ.Ա. Գուրվիչի, Գ.Ա. Ժիլինի, Վ.Ս. Կալմասկու, Ն. Մոլի, Գ. Գոմյենի, Գ. Հարիսի և Լ. Չվասակի և այլոց աշխատությունները:

**Հետազոտության իրավական և փորձառական հիմքը:** Հետազոտության նորմատիվային հենքը կազմել են վերաքննության կարգով դատական ակտերի վերանայման ինստիտուտին առնչվող Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը, այդ թվում՝ հայրենական իրավական համակարգի բաղկացուցիչ հանդիսացող միջազգային պայմանագրերը: Աշխատանքի իրավական և փորձառական հիմք են հանդիսացել նաև արտասահմանյան երկրների նորմատիվ իրավական ակտեր, Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի, ՀՀ սահմանադրական դատարանի, ՀՀ վճռաբեկ և վերաքննիչ դատարանների դատական ակտերը:

**Հետազոտության ընդհանուր մեթոդաբանությունը և հատուկ մեթոդներն ու եղանակները:** Ատենախոսությունում, պայմանավորված հետազոտման կոնկրետ նպատակով ու խնդիրներով, օգտագործվել են ինչպես ընդհանուր հետազոտական մեթոդները՝ դիալեկտիկայի, համատեսական՝ ինդուկցիայի, դեդուկցիայի, անալիզի, սինթեզի, անալոգիայի մեթոդները, այնպես էլ մասնագիտական հատուկ մեթոդներ՝ համակարգակառուցվածքային, իրավահամեմատական մեթոդները, որոնց կիրառմամբ վերլուծվել են Հայաստանի Հանրապետության ու օտարերկրյա պետությունների՝ դատական ակտերի վերանայման վարույթները կարգավորող օրենսդրությունը, վերաքննության ինստիտուտին վերաբերող գիտահետազոտական աշխատանքները, վեր են հանվել այս բնագավառում առկա հիմնախնդիրները, դրանց լուծման ուղղությամբ առաջադրված ընդհանուր մոտեցումները, առանձնահատկությունները և այլն:

**Ատենախոսության գիտական նորույթը:** Խոսելով ատենախոսության գիտական նորույթի մասին՝ պետք է նշել, որ հայ իրավագիտության մեջ քաղաքացիական դատավարությունում կիրառվող վերաքննության ներկայիս ինստիտուտի վերաբերյալ համապարփակ և ամբողջական գիտահետազոտական աշխատություններ չկան, իսկ առկա աշխատանքներն էլ կրում են հիմնականում նկարագրական-պատմողական բնույթ և չեն անդարադառնում վերաքննության կարգով դատական ակտերի վերանայման արդյունքում առաջացող խնդիրներին և հիմնահարցերին: Սույն աշխատության գիտական նորույթը դրսևորվում է նրանում, որ հայ իրավագիտության մեջ առաջին անգամ հնարավորինս համակողմանի և համակարգային ուսումնասիրության ու վերլուծության է ենթարկվել Հայաստանի քաղաքացիական դատավարությունում կիրառվող վերաքննության մոդելը, որի արդյունքում բացահայտվել են խնդրո առարկայի հետ կապված այնպիսի կարևորագույն հարցեր, իչնպիսիք են հայրենական դատավարագիտության մեջ մինչ այժմ հետազոտման չարժանացած վերաքննության նոր տեսակների առանձնացումը, դրանց առավելություններն ու թերի կողմերը, բացահայտվել են վերաքննիչ բողոքարկման իրավունքի նախադրյալները, որոնք չեն համընկնում իրավաբանական գրականության մեջ քննարկվող հարցին վերաբերող մոտեցումներին, գնահատվել է վերաքննության կարգով դատական ակտերի վերանայման վարույթի արդյունավետությունը, դատական ակտի «վերանայման հիմք» և «բեկանման հիմք», «դատական սխալ» և «արդարադատության սխալ» հասկացությունների տարանջատման համատեքստում վերլուծության

են ենթարկվել նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտումների քաղաքացիադատավարական հետևանքները, հետագուովել և դասակարգման են ենթարկվել վերաքննիչ դատարանի լիազորություններն ու դատական ակտերը, դրանց ներկայացվող պահանջներն ու իրավական գործողության հիմնական հատկանիշները, որպիսի պայմաններում վեր են հանվել այս ինստիտուտում առկա հիմնախնդիրները, արդյունքում ընդհանրացնելով հայրենական իրավական համակարգը կազմող տարբեր իրավական ակտերի, այդ թվում՝ միջազգային պայմանագրերի դրույթները, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի, ՀՀ սահմանադրական դատարանի, ՀՀ վճռաբեկ դատարանի ակտերում արտահայտված իրավական դիրքորոշումները, կատարվել են ինչպես տեսական եզրահանգումներ, այնպես էլ ներկայացվել են ՀՀ օրենսդրության և իրավակիրառ պրակտիկայում առկա թերությունները շտկելուն ուղղված առաջարկություններ:

Ատենախոսության գիտական նորույթն ակնհայտորեն դրսևորվում է պաշտպանության ներկայացվող դրույթներում և օրենսդրության կատարելագործմանն ուղղված առաջարկություններում:

### ***Պաշտպանության ներկայացված դրույթները:***

1. ՀՀ ԶԴՕ-ն (հոդվ. 215) ուղղակիորեն նախատեսում է վերաքննիչ դատարանի կողմից միևնույն վարույթի շրջանակներում մի քանի անձանց վերաքննիչ բողոքների համատեղ քննությունը, ինչը որպես վերաքննության առանձին տեսակ թույլ է տալիս առանձնացնել ինչպես համատեղ, այնպես էլ հանդիպակաց վերաքննությունները: Համատեղ վերաքննությունը գործի քննությանը համատեղ հանդես եկող անձանց (դատակիցների, ինչպես նաև հայցվորի կամ պատասխանողի և դրանց կողմում վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձանց) վերաքննիչ բողոքի հիման վրա իրականացվող վերաքննությունն է: Ընդ որում, համատեղ վերաքննության պարագայում որոշիչ է այն, որ բողոքարկողները հանդես գան նույն պահանջով: Այս դեպքում պարտադիր չէ, որ բողոքարկողները վերաքննիչ բողոքի հիմքում դնեն նույն հիմքերն ու հիմնավորումները: Հանդիպակաց վերաքննությունն առկա է բոլոր այն դեպքերում, երբ գործին մասնակցող անձինք, որոնց շահերը քաղաքացիական դատավարությունում բացառում են միմյանց, իրականացնելով իրենց վերաքննիչ բողոքարկման իրավունքը, ներկայացրել են տրամաբանորեն հակառակ պահանջներ: Հանդիպակաց վերաքննության հիմքում պետք է դնել վերաքննիչ բողոքում ներկայացված պահանջների հակասությունը, միմյանց բացառելու տրամաբանությունը, որոնք քննության առարկա պետք է դառնան վերաքննիչ վարույթի շրջանակներում: Այն դեպքում, երբ հակադիր շահերով օժտված դատավարության մասնակիցները վերաքննիչ բողոքներում ներկայացնում են նույն պահանջները, մենք գործ ունենք համատեղ վերաքննության հետ: Ընդ որում, գործող իրավակարգավորման պայմաններում հանդիպակաց վերաքննությունը կիրառելի է միայն առաջին ատյանի դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերի (վճիռների) վերանայման պարագայում: Համատեղ վերաքննությունը կարող է կիրառվել առաջին ատյանի դատարանի թե՛ միջանկյալ, թե՛ գործն ըստ էության լուծող դատական ակտերի վերանայման պարագայում: Նման դասակարգումը թույլ կտա բարձրացնել տարբեր հիմքերի և հիմնավորումների շրջանակներում վերաքննիչ բողոքների համատեղ քննության արդյունավետությունը և կանխորոշել բողոքաբերների համար ընդհանուր իրավական հետևանքների առաջացումը:

2. Ատենախոսության մեջ հիմնավորվել է, որ վերաքննիչ դատարանը կարող է նոր ապացույցներ ընդունել, եթե դրանք առաջին ատյանի դատարանում գործի քննության ժամանակ չեն ներկայացվել գործին մասնակցող անձանց կամքից անկախ պատճառներով, սակայն վերաքննիչ դատարանը նոր ապացույցի հիման վրա նոր փաստ հաստատ



տել չի կարող: Բացի այդ առաջարկվել է ԶԴՕ 219-րդ հոդվածի 2-րդ մասում «կողմերի կամքից անկախ հանգամանքներով» արտահայտության փոխարեն օգտագործել «գործին մասնակցող անձանց կամքից անկախ հանգամանքներով» արտահայտությունը, քանի որ կողմերից բացի վերաքննիչ բողոքարկման իրավունքով են օժտված նաև երրորդ անձինք:

3. Հեղինակի կողմից առաջ է քաշվել և հիմնավորվել է այն տեսակետը, որ օրենսդրություն պետք է սահմանել ոչ թե վերաքննիչ բողոքի շրջանակներում չվիճարկվող փաստերը որպես հիմք ընդունելու վերաքննիչ դատարանի պարտականությունը, այլև դրանց անդրադառնալու արգելքը: Փաստի հարցում վերաքննության սահմանները կարող են ենթադրել միայն օրենքի պահանջների պահպանմամբ հետազոտված ապացույցների գոյություն: Ուստի, վերաքննիչ դատարանում բողոքի քննության ժամանակ առաջին ատյանի դատարանում հաստատված փաստերն ընդունվում են որպես հիմք, բացառությամբ այն դեպքերի, երբ դրանք հաստատվել են հետազոտման կանոնների ակնհայտ խախտման արդյունքում կամ, երբ բողոքում վիճարկվում է այդ փաստը, և վերաքննիչ դատարանը հանգում է այն եզրակացության, որ տվյալ փաստի վերաբերյալ եզրակացության հանգելիս առաջին ատյանի դատարանը թույլ է տվել ակնհայտ սխալ: Հետազոտման կարգը սահմանող կանոնների խախտմամբ ստացված ապացույցները վերաքննիչ դատարանում կրկին հետազոտման ենթակա չեն, չեն կարող դրվել վերաքննիչ դատարանի որոշման հիմքում, և անհրաժեշտ է այս հիմքով վերադաս դատական ատյանի համար առաջին ատյանի դատարանի դատական ակտը բեկանելու պարտականություն սահմանել:

4. Վերաքննիչ բողոքարկման իրավունքը ոչ միայն դատական պաշտպանության իրավունքի իրականացման ձև է, այլև ստորադաս դատական ատյանում արդար դատաքննության իրավունքի դատական պաշտպանության միջոց այն իմաստով, որ առաջին ատյանի դատարանում գործի ելքի վրա ազդող ցանկացած նյութական կամ դատավարական իրավունքի խախտում հանգեցնում է արդար դատաքննության իրավունքի տարրերի խախտման: Ուստի դատավարության օրենսգիրքը վերաքննիչ բողոքարկման բավարար կառուցակարգեր պետք է պարունակի նաև այն դեպքերում, երբ քաղաքացիական գործով անհրաժեշտ է իրականացնել այլ անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանություն, որպիսի գործառույթը պայմանավորված է իրավասու սուբյեկտի՝ օրենքով իրեն վերապահված լիազորություններն իրականացնելու հանգամանքով: Հետևաբար առաջարկվում է ՀՀ ԶԴՕ 205-րդ հոդվածում վերաքննիչ բողոք բերելու իրավունք ունեցող սուբյեկտների շրջանակը լրացնել այլ անձանց իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանությամբ հանդես գալու իրավասություն ունեցող անձանցով, իսկ վերաքննիչ բողոքարկման հնարավորություն նրանց ընձեռել միայն օրենքով ուղղակիորեն նախատեսված դեպքերում:

5. Ատենախոսության մեջ առաջարկվում է առանձնացնել վերաքննության օբյեկտ (բողոքարկման արդյունքում ամբողջությամբ կամ մասնակիորեն վերանայման ենթակա դատական ակտ) և առարկա հասկացությունները՝ որպես ելակետ ընդունելով այն հանգամանքը, որ վերաքննիչ դատարանը, կաշկանդված լինելով վերաքննության օբյեկտով, վերաքննության առարկայով (վերաքննիչ բողոքում ներկայացված պահանջով) կաշկանդված չէ:

6. Վերաքննության կարգով անմիջականորեն բողոքարկման ենթակա պետք է լինի գործին մասնակցող անձի արդար դատաքննության իրավունքը խախտող յուրաքանչյուր դատական ակտ, եթե դրա արդյունքում հնարավոր է վերացնել այդ խախտումը: Իրավակարգավորման ներկայիս պայմաններում վերաքննիչ բողոքարկման իրավունքի

օբյեկտ կարող են լինել ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ օրինական ուժի մեջ չմտած և օրինական ուժի մեջ մտած՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերը, իսկ վերաքննության օբյեկտ են հանդիսանում միայն օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը, քանի որ վերաքննիչ դատարանը բողոքը վերադարձնելու հիմքերի բացակայության դեպքում վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու մասին որոշումը կայացնում է բողոք բերելու համար սահմանված վերջնաժամկետը լրանալուց հետո՝ մեկամսյա ժամկետում: Ուստի անհրաժեշտ է ՀՀ ՔԳՕ 140-րդ հոդվածի 1-ին մասում ավելացնել «եթե գործն ըստ էության լուծող դատական ակտի դեմ վերաքննիչ բողոք չի բերվել» արտահայտությունը և առանձին նորմով սահմանել, որ վերաքննիչ դատարանի կողմից բողոքի ընդունումը մերժելու կամ վերադարձնելուց հետո թերությունները շտկելու համար սահմանված ժամանակահատվածի ավարտից հետո այն նորից չներկայացնելու կամ ներկայացնելու դեպքում՝ վերաքննիչ դատարանի կողմից բողոքը չընդունելու պահից առաջին ատյանի դատարանի վճիռը մտնում է օրինական ուժի մեջ: Բացի այդ, ՀՀ Դատական օրենսգրքի 39-րդ հոդվածի 2-րդ կետի՝ «Վերաքննիչ դատարանը միջանկյալ դատական ակտերը վերանայում է օրենքով նախատեսված բացառիկ դեպքերում» ձևակերպումից պետք է հանել «բացառիկ» բառը, ինչը հոդվածի շարադրանքն առավել կհամապատասխանեցնեք դատական պաշտպանության իրավունքի իրականացման հիմնադրույթներին:

7. Գործնականորեն ամբողջությամբ կամ մասնակի կարող է բողոքարկվել առաջին ատյանի դատարանի վճռի միայն եզրափակիչ մասը, քանի որ ներկայումս վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքը բավարարելու և թերի կամ սխալ պատճառաբանված դատական ակտը պատճառաբանելու լիազորություն չունի, իսկ դատարանին վերջինիս լիազորությունների մեջ չմտնող դատավարական գործողություն կատարելու պահանջով դիմելն իմաստագուրկ է: Հետևաբար ներկայումս վճռի պատճառաբանական մասը վերաքննիչ բողոքարկման ինքնուրույն օբյեկտ լինել չի կարող: Հիմք ընդունելով այն, որ օրինական ուժի մեջ մտած վճռով հաստատված հանգամանքները գործին մասնակցող անձանց միջև այլ քաղաքացիական գործ քննելիս ձեռք են բերում նախադատելիության հատկանիշ՝ ատենախոսության մեջ առաջարկվել է վերաքննիչ դատարանին վերաքննիչ բողոքը բավարարելու և սխալ կամ թերի պատճառաբանված դատական ակտը պատճառաբանելու լիազորություն վերապահել, որպիսի պայմաններում վերաքննիչ բողոքարկման ինքնուրույն օբյեկտ կարող է հանդես գալ նաև դատարանի վճռի պատճառաբանական մասը:

8. Հեղինակն առաջարկել է օրենսդրորեն տարանջատել վերաքննիչ բողոքարկման իրավունքի նախադրյալների բացակայության և բողոքարկման իրավունքի իրականացման կարգը խախտելու քաղաքացիատավարական հետևանքները: Հետևաբար, դատավարության օրենսգրքում անհրաժեշտ է առանձնացնել վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու և վերադարձնելու հիմքերը, իսկ վերաքննիչ դատարանին բողոքի ընդունումը մերժելու հնարավորություն ընձեռել:

9. Վերաքննության փուլում բողոքաբերի սուբյեկտիվ իրավունքների, այդ թվում՝ արդար դատաքննության իրավունքի լիարժեք պաշտպանության նպատակով անհրաժեշտ է վերաքննիչ բողոքի հիմքերն ու հիմնավորումները լրացնելու հնարավորություն ընձեռել, եթե դա չի հանգեցնում վերաքննիչ բողոքի էության փոփոխության և դատարանն ապահովում է գործին մասնակցող անձի՝ վերաքննիչ բողոքի լրացված հիմքերի և հիմնավորումների վերաբերյալ պատասխան ներկայացնելու հնարավորությունը: Հեղինակի կարծիքով վերաքննիչ բողոքի հիմքերն ու հիմնավորումները, բողոքի առարկան փոխելու վերաբերյալ տնօրինչական գործողությունների սահմանափակումները կարող են կիրառ-

վել միայն արդեն իսկ հարուցված վերաքննության պայմաններում: Առաջարկվել է մինչև վերաքննիչ դատարանի կողմից բողոքը վարույթ ընդունելու մասին որոշում կայացնելը բողոքաբերի կողմից բողոքը հետ վերցնելու պարագայում ՀՀ ՔԳՕ 213-րդ հոդվածի 3-րդ մասի ուժով ամրագրել վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին որոշումը ստանալու պահից երկշաբաթյա ժամկետում այն կրկին դատարան ներկայացնելու հնարավորությունը:

10. Ատենախոսության մեջ առաջարկվել է վերանայել վերաքննիչ դատարանի լիազորությունների շրջանակը, մասնավորապես՝ վերաքննիչ դատարանը պետք է հնարավորություն ունենա բացառիկ դեպքերում պատճառաբանել առաջին ատյանի դատարանի՝ գործն ակնհայտորեն ճիշտ լուծող, սակայն չպատճառաբանված դատական ակտը, երբ վճռի էությունից ակնհայտորեն բխում է դրա կոնկրետ պատճառաբանությունը, և եթե դա բխում է արդարադատության արդյունավետության շահերից: Վերաքննիչ դատարանին պետք է վերապահել նոր փաստ հաստատելու և ստորադաս դատարանի ակտը մասնակիորեն բեկանելու և փոփոխելու լիազորություն: ՀՀ ՔԳՕ 221 հոդվածի 1-ին մասի 5-րդ կետում անհրաժեշտ է ուղղակիորեն սահմանել դիմումն առանց քննության թողնելու, իսկ 2-րդ մասում՝ միջանկյալ դատական ակտերը վերացնելու՝ վերաքննիչ դատարանի իրավազորությունները: ՀՀ ՔԳՕ 221-րդ հոդվածի 3-րդ մասում անհրաժեշտ է վերացնել «կարող է» ձևակերպումը, ինչը հնարավորություն կտա հստակություն մտցնել, թե վերաքննիչ դատարանը երբ է պարտավոր, և երբ իրավունք ունի կասեցնել գործի վարույթը: Վերաքննիչ դատարանին պետք է վերապահել սեփական որոշումները պարզաբանելու, թույլ տրված վրիպակները, գրասխալները և թվաբանական սխալները ուղղելու, ինչպես նաև լրացուցիչ որոշում կայացնելու լիազորություն: Նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով դատական ակտի վերանայման պարագայում ՀՀ վերաքննիչ դատարանը պետք է ունենա վերաքննիչ բողոքը բավարարելու և վերանայվող դատական ակտն անփոփոխ թողնելու լիազորություն:

11. Ատենախոսության մեջ առաջ քաշվում և հիմնավորվում է այն տեսակետը, որ անհրաժեշտ է տարանջատել «դատական սխալ» և «արդարադատության սխալ» հասկացությունները՝ դատական սխալ համարելով գործի ելքի վրա ազդող նյութական կամ դատավարական իրավունքի նորմերի խախտումները: Արդարադատության սխալի պարագայում թեև առկա չեն գործի ելքի վրա ազդող նյութական կամ դատավարական իրավունքի նորմերի խախտումներ, սակայն չեն իրացվում արդարադատության վերջնական նպատակները՝ խախտված կամ վիճարկվող սուբյեկտիվ իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը: ՀՀ դատավարության օրենսդրությունը դատական ակտի բեկանումը հնարավոր է համարում նաև դատական սխալի՝ նյութական կամ դատավարական իրավունքի նորմերի խախտումների բացակայության պայմաններում:

12. Դատավարության օրենսգրքի վերլուծության արդյունքում կարող ենք առանձնացնել նաև դատական ակտի պարտադիր բեկանման հիմքերը (երբ առկա են քաղաքացիական դատավարությունը բացառող հանգամանքներ, սակայն դատարանը չի մերժել հայցադիմումի ընդունումը (հոդվ. 91) կամ չի կարճել գործի վարույթը և վճիռ է կայացրել (հոդվ. 109), կամ գործին մասնակցող անձն իրենից անկախ հանգամանքներով չի ներկայացրել գործի լուծման համար էական նշանակություն ունեցող ապացույց (հոդվ. 219, մաս 2)), կամ վճիռ է կայացրել գործին մասնակից չդարձված անձի իրավունքների և պարտականությունների վերաբերյալ: Դատական ակտի պարտադիր բեկանման հիմքերը դատավարական իրավունքի նորմերի այնպիսի խախտումներ են, որոնք բոլոր դեպքերում ազդում կամ կարող են ազդել գործի ելքի վրա: Դատական ակտի անվերապահ բեկանման հիմքերը դատավարական իրավունքի նորմերի այնպիսի խախտումներ են, ո-

րոնք, անկախ գործի ելքի վրա ազդեցությունից, ինչպես նաև ստորադաս դատարանի կողմից գործն ըստ էության ճիշտ լուծելու հանգամանքից, պետք է հանգեցնեն վճռի բեկանման:

13. Ատենախոսության մեջ առաջարկվում և հիմնավորվում է, որ դատական ակտի անվերապահ բեկանման հիմքերի առկայության դեպքում վերաքննիչ դատարանը պետք է հնարավորություն ունենա բոլոր դեպքերում բեկանել ստորադաս դատարանի դատական ակտը՝ դուրս գալով վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններից:

14. Հեղինակն առաջարկում է ՀՀ ՔԳ-Օ ներդնել դատական ակտերի դասակարգման եռաստիճան համակարգ՝ առանձնացնելով գործն ըստ էության լուծող, գործը լուծող և միջանկյալ դատական ակտերը, ինչը հնարավորություն կընձեռի հատկեցնել վերադաս դատարանների որոշումների տեղը դատական ակտերի համակարգում: Գտնում ենք, որ վերաքննիչ դատարանի՝ գործը լուծող դատական ակտ կարելի է համարել միայն ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերի վերաքննության արդյունքում կայացվող որոշումը, որն արտացոլում է վերանայվող դատական ակտի օրինականության ու հիմնավորվածության վերաբերյալ վերաքննիչ ատյանի վերջնական եզրահանգումներն ու հրամայական դատողությունները, եզրափակում է կոնկրետ քաղաքացիական գործով վերաքննիչ դատարանի դատական գործունեությունը և ուղղված չէ վիճելի նյութական իրավահարաբերությունը կարգավորելուն: Գործն ըստ էության լուծող կարող է համարվել միայն դատական ակտի վերանայման արդյունքում վիճելի նյութական իրավահարաբերությունների կարգավորմանն ուղղված՝ վերաքննիչ դատարանի որոշումը:

15. Վերաքննիչ դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերի վերաքննության արդյունքում կայացվող որոշումներին կարելի է ներկայացնել իրավական նպատակահարմարության լրացուցիչ պահանջ: Վերաքննիչ դատարանը, կաշկանդված չլինելով վերաքննիչ բողոքում ներկայացված պահանջով, ինքնուրույն է որոշում, թե ՀՀ ՔԳ-Օ 221-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված լիազորություններից որ մեկն է առավել նպատակահարմար կիրառել սուբյեկտիվ իրավունքների արդյունավետ պաշտպանությունն իրականացնելու նպատակով: Հետևաբար, վերաքննիչ դատարանը պետք է կայացնի այնպիսի որոշում, որն անպայմանորեն առավելագույնս պետք է նպատակահարմար լինի սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության և արդարադատության արդյունավետության ապահովման տեսանկյունից:

16. Վերաքննիչ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած որոշումների բացառիկության և նախադատելիության հաստկանիչների կիրառման սահմաններն ապահովելու նպատակով ՀՀ ՔԳ-Օ 52-րդ հոդվածի 2-րդ մասում «օրինական ուժի մեջ մտած վճռով հաստատված հանգամանքների» փոխարեն պետք է օգտագործել «օրինական ուժի մեջ մտած դատական ակտով հաստատված հանգամանքներ» արտահայտությունը, որը կենթադրի նաև վերաքննիչ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած որոշումների նախադատելիության հաստկանիչը, իսկ ՔԳ-Օ 91-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում և 109-րդ հոդվածի 2-րդ մասում «օրինական ուժի մեջ մտած վճիռ» բառակապակցության փոխարեն պետք է օգտագործել «օրինական ուժի մեջ մտած դատական ակտ» ձևակերպումը, ինչը հնարավորություն կընձեռի իրավակարգավորման շրջանակ ընդգրկել բացառիկության հաստկանիչով օժտված բոլոր դատական ակտերը:

17. Ատենախոսության մեջ առաջարկվում է դատավարության օրենսգիրք ներդնել վերաքննիչ (վերադաս) դատարանի կողմից բեկանված մասով գործերի նոր քննության վարույթ, սահմանելով գործերի քննության այնպիսի կանոններ, որոնք կապահովեն վե-

րաքննիչ դատարանի կողմից վճիռը բեկանելու դեպքում գործը նոր քննության ուղարկելու դատավարական ժամկետները, ստորադաս դատարանի կողմից գործը վարույթ ընդունելու մասին որոշման կայացման դատավարական կարգը, ստորադաս դատարանում նախկինում գործի քննությանը մասնակցած դատավորի կողմից գործի նոր քննությանը մասնակցելու արգելքը, ինչպես նաև գործի քննության սահմանները, այն է՝ պետք է սահմանափակել հայցի առարկան կամ հիմքը փոխելուն, վերադաս դատական ատյանի կողմից գործի փաստական և իրավական հանգամանքների վերաբերյալ արտահայտած դիրքորոշումը շրջանցելուն ուղղված դատավարական գործողությունները, բացառել նոր ապացույցներ ներկայացնելու հնարավորությունը, եթե դա պայմանավորված չէ դատարանի կողմից ապացույցման պարտականությունը բաշխելիս նոր փաստ ապացուցելու անհրաժեշտությամբ:

**Հետազոտության տեսական և գործնական նշանակությունը:** Ատենախոսության շրջանակներում կատարված հետազոտությունների տեսական նշանակությունն ամենից առաջ պայմանավորված է նրանով, որ այն հանդիսանում է քաղաքացիական դատավարությունում վերաքննության կարգով դատական ակտերի վերանայման հիմնախնդիրների ուսումնասիրությանը նվիրված առաջին համալիր և ամբողջական հետազոտությունը հայկական դատավարագիտության մեջ: Ատենախոսության շրջանակներում արված վերլուծությունների արդյունքները կարող են օգտագործվել հետագա գիտական հետազոտություններում և այն դասընթացներում, որոնց առարկան որևէ կերպ առընչվում է քաղաքացիական դատավարությունում դատական ակտերի վերանայման վարույթների ուսումնասիրությանն ու առկա հիմնախնդիրների ուսումնասիրությանը:

Վերաքննության ինստիտուտի ուսումնասիրության արդյունքները և բացահայտված հիմնահարցերի լուծման առաջարկներն ու դրանց հիմնավորումները կարող են օգտագործվել նաև իրավաստեղծ գործունեության ժամանակ, ինչպես նաև նպաստել դատական իրավակիրառ պրակտիկայի կատարելագործմանը:

**Հետազոտությունների արդյունքների ներդրումն ու փորձարկումը:** Ատենախոսությունը պատրաստվել է ԵՊՀ քաղաքացիական դատավարության ամբիոնում: Հետազոտության արդյունքները արտացոլված են հեղինակի կողմից հրապարակված մենագրություններում, ինչպես նաև գիտական հոդվածներում, որոնք լույս են տեսել տարբեր ամսագրերում և գիտական ժողովածուներում: Ատենախոսության մի շարք դրույթներ հեղինակի կողմից ներկայացվել են զեկույցների և առանձին դասընթացների շրջանակներում:

Ատենախոսության եզրակացությունների և առաջարկների որոշ մասն իրենց արտացոլումն է ստացել նաև ՀՀ արդարադատության նախարարության աշխատանքային խմբի կողմից մշակված Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի նախագծում<sup>7</sup>:

**Ատենախոսության կառուցվածքը:** Հետազոտությամբ առաջադրված խնդիրների համարժեք լուծման նկատառումներով պայմանավորված՝ ընտրվել է աշխատության այնպիսի կառուցվածք, որը հնարավորություն է տվել անհրաժեշտ խորությամբ և ամբողջականությամբ ներկայացնելու հետազոտության նյութն ու արդյունքները: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, 6 գլուխներից, որոնք ընդհանուր առմամբ ներառում են 13 պարագրաֆներ, եզրակացությունից, ինչպես նաև օգտագործված իրավական ակտերի, զրականության և դատական պրակտիկայի նյութերի ցանկից:

#### **ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ**

**Ատենախոսության ներածությունում** հիմնավորվում է հետազոտության թեմայի արդիականությունը, ներկայացվում են դրա մշակվածության աստիճանը, նպատակներն ու

<sup>7</sup> Stu [http://moj.am/storage/files/legal\\_acts\\_5394019566\\_Qax\\_dat](http://moj.am/storage/files/legal_acts_5394019566_Qax_dat):

խնդիրները, ատենախոսության ուսումնասիրման օբյեկտն ու առարկան, տեսական նորմատիվաիրավական և փորձառական հիմքերը, հետազոտության ընդհանուր մեթոդաբանությունը և մասնավոր մեթոդներն ու եղանակները, գիտական նորույթը, ինչպես նաև շարադրվում են պաշտպանության ներկայացվող դրույթները, հետազոտության գիտագործնական նշանակությունը, կատարված հետազոտության արդյունքների փորձարկումը:

**Ատենախոսության առաջին գլուխը՝** «Վերաքննության էության և իրավական բնույթի հիմնախնդիրները» վերտառությամբ, կազմված է երկու պարագրաֆներից:

**Առաջին գլխի առաջին պարագրաֆը՝** «Վերաքննության հասկացությունը և տեսակները» վերտառությամբ, նվիրված է վերաքննության կարգով դատական ակտերի վերանայման ինստիտուտի իրավական բնույթի և էության բացահայտմանը, ՀՀ քաղաքացիական դատավարությունում վերաքննության խնդիրների և նպատակների, ինչպես նաև վերաքննության առանձին տեսակների վերլուծությանն ու առկա հիմնախնդիրները վեր հանելուն: Հեղինակը նշում է, որ վերաքննությունը դատական գործունեության ձև է, որն ուղղված է առաջին ատյանի դատարանում գործի քննության ընթացքում թույլ տրված խախտումները բացահայտելուն, դատական սխալները ուղղելուն և վերացնելուն, իրականացվում է վերաքննիչ բողոքարկման արդյունքում առաջին ատյանի դատարանի դատական ակտերը վերանայելու, դրանց օրինականությունն ու հիմնավորվածությունը ստուգելու, ինչպես նաև վերաքննությունը եզրափակող համապատասխան դատական ակտ կայացնելու միջոցով: Հեղինակն իր անհամաձայնությունն է հայտնում դատավարագիտության մեջ վերաքննության հասկացության կապակցությամբ ձևավորված մոտեցման հետ, որի արդյունքում վերաքննությունը նույնացվում է վերաքննիչ բողոքարկման իրավունքի հետ և փաստում է, որ վերաքննության կարգով վերանայման ենթակա են օրինական ուժի մեջ մտած և ուժի մեջ չմտած դատական ակտերը, հատկապես, երբ ՔԴՕ 144-րդ հոդվածի համաձայն դատարանի որոշումներն (միջանկյալ դատական ակտերը) ուժի մեջ են մտնում կայացման կամ ընդունման պահից: Այսինքն, վերաքննության կարգով դատական ակտի վերանայումը հնարավոր է քաղաքացիական դատավարության տարբեր փուլերում՝ առաջին ատյանի դատարանում գործի քննության ընթացքում, երբ բողոքարկվում են միջանկյալ դատական ակտերը, այնպես էլ գործն ըստ էության լուծող դատական ակտի կայացումից հետո, այդ թվում՝ այն դեպքերում, երբ վճիռն արդեն մտել է օրինական ուժի մեջ: Ընդ որում, վերաքննությունը քաղաքացիական դատավարությունում ձեռք է բերում երկակի նշանակություն՝ այն անձի դատական պաշտպանության իրավունքի տարրը հանդիսացող դատական ակտերի բողոքարկման իրավունքի իրացմանն ուղղված դատավարական կառուցակարգ է և միաժամանակ՝ ստորադաս դատական ատյանի գործունեության նկատմամբ վերահսկողության իրականացման, ինչպես նաև առաջին ատյանի դատարանի գործունեության օրինականությունն ապահովելու միջոց:

Հեղինակը հատուկ ուշադրության է արժանացրել քաղաքացիական դատավարության իրավունքի գիտությունում վերաքննության առանձին տեսակների ուսումնասիրությանն ու վերլուծությանը՝ բացահայտելով դրանց բոլոր առավելությունները և թերի կողմերը: Անդրադառնալով դատավարագիտության մեջ ընդունված՝ անհատական կամ համատեղ, սկզբնական կամ միանալու միջոցով (դատավարության այլ մասնակցի կողմից վերաքննիչ բողոքին միանալու միջոցով), գլխավոր կամ հանդիպակաց վերաքննությունների դիտարկմանը, հեղինակը նշում է, որ ՀՀ ՔԴՕ 215-րդ հոդվածն ուղղակիորեն նախատեսում է վերաքննիչ դատարանի կողմից մեկույն վարույթի շրջանակներում մի քանի անձանց վերաքննիչ բողոքների համատեղ քննությունը, որը վկայում է ինչպես համա-

տեղ, այնպես էլ հանդիպակաց վերաքննությունների գոյության մասին: Հեղինակը հիմնավորել է, որ հանդիպակաց վերաքննության հիմքում պետք է դնել վերաքննիչ բողոքում ներկայացված պահանջների հակասությունը, միմյանց բացառելու տրամաբանությունը, որոնք քննության առարկա պետք է դառնան վերաքննիչ վարույթի շրջանակներում: Չի կարելի արդարացված համարել այն միտքը, որ հանդիպակաց վերաքննության ժամանակ անհրաժեշտ է, որպեսզի բողոք բերողները ներկայացնեն իրենց բնույթով տարբեր պահանջներ: Նրանք կարող են հանդես գալ նույնական պահանջով, սակայն դրանք տրամաբանորեն բացառեն կամ հակասեն միմյանց: Որպես արտակարգ վերաքննության օրինակ՝ ատենախոսության մեջ ուշադրության է արժանացվել նոր կամ նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտի վերանայման վարույթը, որը, որպես քաղաքացիական դատավարության ինքնուրույն և բացառիկ փուլ, կիրառելի է միայն օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի վերանայման պարագայում և հետապնդում է ոչ թե դատական սխալի, այլև արդարադատության իրականացման արդյունքում տեղ գտած թերությունները շտկելու նպատակ, որոնք կարող են և կապված չլինել գործի ելքի վրա ազդող նյութական կամ դատավարական իրավունքի նորմերի խախտումների հետ: Ընդ որում, արտակարգ վերաքննության պարագայում որոշիչը ոչ թե վերանայվող դատական ակտի վերջնական բնույթն ու օրինական ուժի մեջ լինելու հանգամանքն է, այլև վերանայման հիմքերի բացառիկությունը:

Քաղաքացիական դատավարության իրավունքի գիտության մեջ սահմանափակ և անսահմանափակ վերաքննությունների տարանջատման համատեքստում հեղինակը քննադատաբար է մոտեցել ՀՀ-ում քաղաքացիական գործերով կիրառվող սահմանափակ վերաքննությանը և ՀՀ ՔԳ-Օ 208-րդ հոդվածով նախատեսված վերաքննիչ բողոք բերելու այնպիսի սահմանափակումներին, որոնք անձին լիարժեք հնարավորություն չեն ընձեռում իրացնել դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքները՝ գտնելով, որ անսահմանափակ դատական պաշտպանության իրավունքի ամրագրման պայմաններում գույքային պահանջներով վերաքննության սահմանափակումներ օրենքով նախատեսելը ճիշտ չէ: Բացի այդ, հեղինակի կարծիքով վերաքննության սահմանափակումները կիրառելի են միայն առաջին ատյանի դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերի վերաքննիչ բողոքարկման պարագայում և չի համաձայնվում այն տեսակետի հետ, թե առաջին ատյանի դատարանի ոչ բոլոր միջանկյալ դատական ակտերն են վերաքննության կարգով ենթակա բողոքարկման, և օրենքն այս հարցում ևս սահմանափակում է նախատեսել: Մասնավորապես, այս պարագայում անտեսվում է ոչ անմիջական կամ հետաձգված բողոքարկման հնարավորությունը, քանի որ ՀՀ օրենսդրությունը որևէ արգելք չի պարունակում գործն ըստ էության լուծող դատական ակտերի բողոքարկման շրջանակներում առաջին ատյանի դատարանի միջանկյալ դատական ակտերը վիճարկելու վերաբերյալ:

Հեղինակը թե գործնական, թե տեսական առումներով հատկապես կարևորել է վերաքննությունը լրիվ և ոչ լրիվ տեսակների բաժանումը, հատուկ վերլուծության են ենթարկվել տարբեր երկրներում քաղաքացիական գործերով կիրառվող լրիվ և ոչ լրիվ վերաքննությունների առավելություններն ու թերի կողմերը, ընդհանրացվել են այս հարցի կապակցությամբ քաղաքացիական դատավարության իրավունքի գիտության մեջ ձևավորված մոտեցումները, որոնց արդյունքում հեղինակը հանգել է այն եզրակացության, որ լրիվ վերաքննության պայմաններում չի երաշխավորվում ներպետական բոլոր դատական ատյաններում գործին մասնակցող անձի կողմից փաստական հանգամանքների և երկրորդ ատյանում ներկայացված ապացույցների կապակցությամբ դիրքորոշում արտահայտելու հնարավորությունը: Բացի այդ, նշվել է, որ վերաքննության տեսակը որոշե-

լու հարցում պետք է կարևորել այն հանգամանքը, թե վերաքննիչ դատարանը գործի քննության արդյունքում ինչ ակտ է կայացնում՝ վճիռ, թե որոշում, որից էլ կախված է գործը ստորադաս դատարան նոր քննության ուղարկելու հնարավորության հարցը: Ինչ վերաբերում է նոր ապացույցներ ներկայացնելու և փաստեր վկայակոչելու սահմանափակումներին, ինչպես նաև դատական ակտի վերանայման դատավարական այլ առանձնահատկություններին, ապա դրանք ավելի շուտ գործառութային բնույթի հատկանիշներ են, որոնք կարող են բնութագրել նաև իրավական համակարգ ներդրված լրիվ վերաքննությունը, ուստի, խառը վերաքննություն պետք է համարել դատական ակտի վերանայման այն մոդելը, երբ վերաքննիչ դատարանն օժտված է գործն ամբողջ ծավալով կրկնակի քննելու և արդյունքում վճիռ՝ վիճելի նյութական իրավահարաբերությունն անմիջականորեն կարգավորող դատական ակտ կայացնելու իրավունքով, և միաժամանակ օրենքով նախատեսված դեպքերում գործը ստորադաս դատարան՝ նոր քննության ուղարկելու իրավասությամբ:

**Առաջին գլխի երկրորդ պարագրաֆում՝** «Վերաքննության տեսակի (մոդելի) հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարությունում» վերտառությամբ, հետագոտվել և վերլուծության են ենթարկվել ՀՀ-ում քաղաքացիական գործերով կիրառվող ոչ լրիվ վերաքննության ինստիտուցիոնալ և գործառութային առանձնահատկությունները, որոնք պայմանավորում են դատական ակտի վերանայման սահմանները, գործի փաստական և իրավական հանգամանքների գնահատման արդյունքում վերանայվող դատական ակտի իրավաչափությունը որոշելու համար անհրաժեշտ երաշխիքների ապահովումը, այդ թվում՝ իրավական ներգործության միջոցների ճիշտ կիրառությունը: Ընդ որում, վերաքննության սահմանները կանխորոշող՝ ՀՀ ՔԴՕ 219-րդ հոդվածի, 208-րդ հոդվածի 3-րդ մասի, ՀՀ Սահմանադրական դատարանի թիվ 06.12.2011թ. ՍԴՈ-1004, թիվ 15.07.2011 թ. ՍԴՈ 984, թիվ 23.02.2011թ. ՍԴՈ 943 և մի շարք այլ որոշումների, ինչպես նաև ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումների համակարգային վերլուծության արդյունքում հեղինակը գտել է, որ քննարկվող հարցի կապակցությամբ ձևավորված դատական իրավակիրառ պրակտիկան սխալ ուղղությամբ է զարգանում: Հեղինակն անընդունելի է համարում այն գաղափարը, որպիսի պայմաններում ստորադաս դատական ատյանում բողոքարկվող հարցի վերաբերյալ բողոքաբերի կողմից դիրքորոշում արտահայտելը կարող է վերաբերվել նաև քաղաքացիական գործի իրավական հանգամանքներին: Ընդ որում, ատենախոսության շրջանակներում հատուկ ընդգծվել է, որ վերաքննիչ բողոքում բերված փաստարկեր քննության առնելիս դատարանը պետք է հաշվի առնի ներկայացված փաստարկի (դիրքորոշման) վերաբերելիությունը և այդ տեսանյունից սահմանափակման ողջամտությունը: Անհրաժեշտ է առաջին հերթին գնահատական տալ գործին մասնակցող անձանց այն փաստարկներին, որոնք առաջին ատյանի դատարանին պարտադրում են դրսևորել որոշակի վարքագիծ՝ ներկայացված դիրքորոշումը գնահատելու և փաստական հանգամանքների նկատմամբ իրավունքի նորմերը կիրառելու առումով: Անդարադառնալով վերաքննիչ բողոքի և բողոքի պատասխանի հիման վրա վերաքննիչ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի շրջանակը որոշելու հարցին, հեղինակը նշում է, որ ներկայումս կիրառվող ոչ լրիվ վերաքննության մոդելի թերություն պետք է համարել այն, որ առաջին ատյանի դատարանում գործի քննության ժամանակ թույլ տրված նույնիսկ էական խախտումը վերաքննիչ բողոքում չնշելը զրկում է վերաքննիչ դատարանին դրանց արձագանքելու հնարավորությունից, ինչի հետևանքով ոչ իրավաչափ արդարադատության արդյունքում կայացված դատական ակտը կարող է օրինական ուժի մեջ մնալ: Բողոքի շրջանակներում գործով պարզված հանգամանքները ներառում են բողոքարկված



դատական ակտի օբյեկտային սահմանները և այս առումով ՀՀ վճարելի դատական իրավակիրառ պրակտիկան ենթակա է վերանայման, այն պետք է համապատասխանեցվի անձի դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքներին: Հեղինակը նշում է նաև, որ վերաքննիչ դատարանի մոտ նոր ապացույցի հիման վրա նոր փաստ հաստատելու իրավագործության բացակայությունը վերջինիս չի գրկում նոր ապացույցն ընդունելու հնարավորությունից: Վերաքննիչ դատարանը գտնելով, որ նոր ապացույցը էական նշանակություն ունի գործի լուծման համար, բոլոր դեպքերում պարտավոր է բեկանել դատական ակտը և, առանց նոր փաստ հաստատելու, գործն ուղարկել ստորադաս ատյանի դատարան՝ նոր քննության: Բացի այդ, անհրաժեշտ է հստակեցնել վերաքննիչ դատարանի կողմից առաջին ատյանի դատարանում հաստատված փաստերը հիմք ընդունելու կամ հետազոտված ապացույցի հիման վրա նոր փաստ հաստատելու համար անհրաժեշտ իրավաչափության պայմանների շրջանակը, այն է՝ այդպիսի փաստերը վերաքննիչ դատարանի կողմից ընդունվում են որպես հիմք, բացառությամբ այն դեպքերի, երբ դրանք հաստատվել են հետազոտման կանոնների ակնհայտ խախտման հետևանքով կամ, երբ բողոքում վիճարկվում է այդ փաստը և վերաքննիչ դատարանը հանգում է այն եզրակացության, որ տվյալ փաստի գնահատման հարցում ստորադաս դատարանը թույլ է տվել ակնհայտ սխալ, իսկ վերաքննիչ դատարանը նոր փաստ կարող է հաստատել միայն առաջին ատյանի դատարանում հետազոտման կարգի պահպանմամբ ստացված ապացույցների գնահատման արդյունքում:

Ամփոփելով շարադրվածը, հեղինակը գտնում է, որ ՀՀ քաղաքացիական դատավարությունում վերաքննության տեսակը որոշելու հիմքում պետք է դնել ինչպես դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացումը, այնպես էլ դատարանակազմության և դատական համակարգի յուրաքանչյուր օղակի առջև դրված խնդիրների առանձնահատկությունները: ՀՀ դատական համակարգը (դատարանակազմությունը) կարող է լիարժեքորեն երաշխավորեն քաղաքացիական դատավարության կարգով անձանց սուբյեկտիվ իրավունքների պաշտպանություն, ապահովել դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքների լիարժեք իրացում, սակայն անհրաժեշտ է նաև ոչ լրիվ վերաքննության ինստիտուտում իր կողմից առաջարկվող փոփոխությունների ներդրումը, որոնք անմիջականորեն կբարձրացնեն ՀՀ-ում արդարադատության արդյունավետությունը:

**Երկրորդ գլուխը՝ «Քաղաքացիական գործերով վերաքննիչ բողոքարկման իրավունքի իրականացման հիմնախդիրները»** վերտառությամբ, բաղկացած է երեք պարագրաֆներից:

**Երկրորդ գլխի առաջին պարագրաֆում՝ «Վերաքննիչ բողոքարկման իրավունքի էությունը (վերաքննիչ բողոքարկումը որպես արդար դատաքննության իրավունքի ապահովման միջոց)»** վերտառությամբ, բացահայտվում են վերաքննիչ բողոքարկման իրավունքի իրավաբանական բնույթն ու էությունը, Եվրոպական դատարանի և ՀՀ Սահմանադրական դատարանի որոշումների լույսի ներքո ուսումնասիրվել և վերլուծության են ենթարկվել դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքների հետ հարաբերակցության դրսևորումները, ներկայացվել են վերաքննիչ բողոքարկման իրավունքի բովանդակության տարրերը: Հեղինակը նշում է, որ թեև վերաքննիչ բողոքարկումը հանդիսանում է դատական պաշտպանության իրավունքի դրսևորման ձև, այնուամենայնիվ բովանդակային առումով տարբերվում է դրանից, քանի որ դրանում բացակայում է նյութաիրավական կողմը և այն զուգորդվում է ստորադաս դատարանի ադատական ակտի օբյեկտային սահմանում ու հիմնավորվածությունը ստուգելու և դատական սխալի վերացման անհրաժեշտ իրավական ներգործություն կիրառելու պահանջով: Դատական

ակտերի բողոքարկումը, վերադաս դատարանի կողմից ստորադաս դատարանների կայացված դատական ակտերի նկատմամբ արդյունավետ հսկողությունը դիտարկվում է որպես արդար դատաքննության իրավունքի տարր, իսկ վերաքննիչ բողոքարկումը՝ որպես առաջին ատյանի դատարանում արդար դատաքննության իրավունքի դատական պաշտպանության միջոց: Հեղինակը կարևորում է ՀՀ Սահմանադրական դատարանի թիվ 27.05.2008թ. ՍԳՈ-754 և 08.10.2008թ. ՍԳՈ-765 որոշումները, սակայն բարձրացնում է ՀՀ ՔԳՕ 208-րդ հոդվածի սահմանադրականության հարցը, որպիսի պայմաններում վերաքննության իրավունքից հրաժարվելու մասին համաձայնությունը դիտարկվում է անձի (քաղաքացու) իրավունակությունից լրիվ կամ մասնակիորեն հրաժարվելուն և սահմանափակելուն ուղղված գործարք, իսկ նվազագույն աշխատավարձի հիսուն հազարապատիկի շեմը չգերազանցող գույքային պահանջներով արդար դատաքննության իրավունքը վերաքննության կարգով դատական պաշտպանության չի արժանանում: Հեղինակը գտնում է, որ վերաքննիչ բողոքարկման իրավունքը քաղաքացիական շրջանառության մասնակիցների՝ առաջին ատյանի դատարանի ակտերի օրինականությունն ու հիմնավորվածությունը ստուգելու պահանջով վերաքննիչ դատարան դիմելու օրենքով երաշխավորված հնարավորությունն է, որը ոչ միայն խախտված կամ վիճարկվող իրավունքների պաշտպանության և վերականգման միջոց է, այլև ստորադաս դատական ատյանի գործունեությունը ստուգելու և արդարադատության ոլորտում օրինականությունն ապահովելու կարողակարգ:

**Երկրորդ գլխի երկրորդ պարագրաֆում՝** «Վերաքննիչ բողոքարկման իրավունքի սուբյեկտները և օբյեկտային նախադրյալները Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարությունում» վերտառությամբ, ներկայացված են վերաքննիչ բողոք բերելու իրավունք ունեցող անձանց և բողոքարկման ենթակա դատական ակտերի հիմնահարցերը, բացահայտված են խնդրո առարկայի իրավակարգավորման առանձնահատկություններն ու խնդրահարույց կողմերը:

Անդրադառնալով վերաքննիչ բողոք բերելու իրավունք ունեցող անձանց շրջանակի պարզաբանմանը, հեղինակը գտնում է, որ դատական ակտի բողոքարկման հնարավորություն ունեցող սուբյեկտների օրենսդրական սահմանման համար որպես ելակետ պետք է ընդունել տվյալ դատական ակտով արդար դատաքննության իրավունքի խախտման հանգամանքը, իսկ որպես նման բողոքը քննության ընդունելու պայման՝ տվյալ խախտման առկայությունը հիմնավորելու պարտականությունը: Ընդ որում, այս մոտեցման հիմքում դրվում է այն հանգամանքը, որ գործի ելքում իրավաբանական շահագրգռվածություն ունեցող անձինք օժտված են վարույթի շարժի վրա ազդելու հնարավորությամբ և կարևորվում է այլ անձանց իրավունքների, օրինական շահերի պաշտպանությամբ հանդես գալու իրավասությամբ օժտված սուբյեկտների կողմից վերաքննիչ բողոք բերելու օրենսդրական կարգավորման անհրաժեշտությունը, ինչպես նաև գլխավոր դատախազի և նրա տեղակալների կողմից նոր կամ նոր երևան հանգամանքներով օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի դեմ վերաքննիչ բողոք բերելու հնարավորությունը, ինչը պայմանավորված է օրենքով վերջիններիս վրա դրված պարտականությունների իրականացման խնդրով: Բացի այդ, գործին մասնակից չդարձված անձանց կողմից նոր կամ նոր երևան եկած հանգամանքներով վերաքննիչ բողոք ներկայացնելը հիմնավորված համարել չի կարելի, քանի որ գործի քննությանը նրանց մասնակից չդարձնելը ակնհայտորեն վկայում է դատական սխալի մասին, որը պետք է վերացվի դատական վերաքննության կարգով:

Բացահայտելով վերաքննիչ բողոքարկման ենթակա դատական ակտերի շրջանակը, հեղինակը գտնում է, որ բողոքարկման պետք է ենթակա լինի անձի արդար դատաքն-

նության իրավունքը խախտող յուրաքանչյուր դատական ակտ, այդ թվում՝ դատական հայեցողության շրջանակներում կայացված ակտերը, իսկ վերաքննության օբյեկտ են հանդիսանում վերաքննիչ բողոքարկման արդյունքում վերանայման ենթակա դատական ակտերը: Ընդ որում, բողոքարկման արդյունքում անպայմանորեն պետք է հնարավոր լինի վերացնել այդպիսի խախտումը, որը կիրառելի է դատական ակտի և անմիջական, և հետաձգված բողոքարկման պարագայում: Հեղինակը հիմք ընդունելով այն հանգամանքը, որ վերաքննության օբյեկտ և առարկա հասկացությունները չեն նույնանում՝ հիմնավորում է, որ վերաքննիչ դատարանը կաշկանդված չէ վերաքննիչ բողոքում ներկայացված պահանջով և օրենքով սահմանված կարգով պարտավոր է բոլոր դեպքերում իրավաչափորեն իրացնել իրեն վերապահված լիազորությունները: Ընդ որում, վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու կանոնների ուսումնասիրության արդյունքում հեղինակը գտնում է, որ վերաքննիչ բողոքարկման իրավունքի օբյեկտ կարող են լինել ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ օրինական ուժի մեջ չմտած և օրինական ուժի մեջ մտած՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերը, իսկ վերաքննության օբյեկտ են հանդիսանում միայն օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը, ինչը ճիշտ համարել չի կարելի: Վերաքննության կարգով բողոքարկման և վերանայման ենթակա են միայն իրավական գործողության մեջ գտնվող միջանկյալ դատական ակտերը: Հեղինակը բացասաբար է մոտեցել վերաքննիչ դատարանի մոտ վերաքննիչ բողոքը բավարարելու և դատական ակտը պատճառաբանելու լիազորության բացակայությանը, ինչի հետևանքով սահմանափակվել է վճռի պատճառաբանական մասի դեմ ինքնուրույն բողոք բերելու հնարավորությունը:

**Երկրորդ գլխի երրորդ պարագրաֆում**՝ «Վերաքննիչ բողոքարկման իրավունքի իրականացման կարգը Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարությունում» վերտառությամբ, հետազոտված են վերաքննիչ բողոքարկման իրավունքի ձևական նախադրյալները՝ վերաքննիչ բողոքի ձևին և բովանդակությանը ներկայացվող պահանջները, բողոքարկման քաղաքացիադատավարական կարգը և ժամկետները, այդ թվում՝ պետական տուրքի վճարման հետ կապված հարցերը, բողոքարկման քաղաքացիադատավարական կարգը խախտելու հետևանքները, բացահայտված են առկա հիմնախնդիրները:

Հեղինակը, վերլուծելով վերաքննիչ բողոքի ձևի և բովանդակության առանձնահատկությունները, արձանագրում է, որ դատավարության օրենքում բողոքի ձևին ներկայացվող պահանջները արդիական չեն և առավելապես համապատասխանում են լրիվ վերաքննության տեսակին: Վերաքննիչ բողոքարկումը, որպես օրենքով սահմանված կարգով և ժամկետներում վերաքննիչ ատյան մուտք գործելու և պաշտպանություն ստանալու հնարավորություն, ենթադրում է որոշակի ընթակարգ, որը պետք է մատչելի լինի քաղաքացական շրջանառության մասնակիցների համար: Բացի այդ, հեղինակն անդրադարձել է բողոքարկման ժամկետների հաշվարկման հիմնախնդրին՝ կապված դատական ակտի հրապարակման պահի հետ, և առաջարկել է ԶԴՕ ներդնել այնպիսի կառուցակարգ, որից հստակորեն կերևա դատավարական ժամկետների հաշվարկման սկիզբը, ինչպես նաև կվերացնի դատական հայեցողության շրջանակներում հրապարակման պահից ուժի մեջ մտած դատական ակտերի բողոքարկման լրացուցիչ ծանրացնող պայմանների կիրառման հնարավորությունը:

Հետազոտելով խնդրո առարկա հարցին վերաբերող օրենսդրությունը և իրավակիրառ դատական պրակտիկան, հեղինակն անդրադարձել է վերաքննիչ բողոքարկման քաղաքացիադատավարական կարգը խախտելու իրավական հետևանքների վերլուծությանը, որի հիմքում դրել է հայցի իրավունքի, վերաքննիչ բողոքարկման իրավունքի նա-

խաղրյալների բացահայտման, ինչպես նաև վերաքննիչ բողոք բերելու պայմանները խախտելու հետ կապված հիմնախնդիրները: Պարզվել է, որ ՔԴ-Օ-ն ընդհանրապես չի տարբերակում վերաքննիչ բողոքարկման իրավունքի նախաղրյալների բացակայության և բողոքարկման պայմանները խախտելու դատավարական հետևանքները և խնդրի վերացմանն ուղղված առաջարկ է ներկայացրել: Ընդ որում, ատենախոսը նաև հիմնավորել է, որ հայցի իրավունքի նախաղրյալներն անհրաժեշտ են միայն առաջին ատյանի դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերի բողոքարկման պարագայում, որոնք միջանկյալ դատական ակտերի նկատմամբ ընդհանրապես կիրառելի չեն:

**Երրորդ գլխից՝** «Վերաքննիչ քաղաքացիական դատարանի լիազորությունները» վերտառությամբ, բաղկացած է երկու պարագրաֆներից:

**Երկրորդ գլխի առաջին պարագրաֆը՝** «Վերաքննիչ քաղաքացիական դատարանի լիազորությունների հասկացությունն ու դասակարգման հիմնախնդիրները» վերտառությամբ, նվիրված է վերաքննիչ դատարանի լիազորությունների իրավական բնորոշման և էության, հատկանիշների, ինչպես նաև դասակարգման չափանիշների վերլուծությանը:

Անդրադառնալով վերաքննիչ դատարանի լիազորությունների էության բացահայտմանը՝ նշվում է, որ դրանք վերաքննիչ բողոքի հիման վրա առաջին ատյանի դատարանի ակտերի օրինականությունն ու հիմնավորվածությունը ստուգելու համար օրենքով նախատեսված դատավարական գործողություն կատարելուն ուղղված իրավունքների և պարտականությունների ամբողջություն են: Ընդ որում, չի կարելի նաև վերաքննիչ դատարանի լիազորությունը նույնացնել որևէ դատավարական գործողություն կատարելու պարտականության հետ, քանի որ այս դեպքում բացակայում է լիազորության բովանդակությունից բխող մյուս տարրը՝ իրավունքը: Առանձնացնելով վերաքննիչ դատարանի լիազորությունների հատկանիշները, հատուկ ընդգծվել է, որ դրանք դատական ակտերի վերանայման խնդիրների իրականացումն ապահովելու միջոցներ են, որոնք արտացոլում են վերաքննիչ ատյանի հիմնական գործառնությունները և ենթադրում են բացառապես օրենսդրությամբ նախատեսված իրավաչափ գործողությունների կատարում:

Հեղինակը փաստում է, որ վերաքննիչ դատարանի լիազորությունների դասակարգման հիմքում կարելի է տարբեր չափանիշներ դնել՝ դատական ակտի տեսակը, որի վերանայման արդյունքում իրացվում է վերաքննիչ դատարանի լիազորությունը, լիազորությունների իրականացման բնույթը կամ առարկայական ուղղվածությունը: Կարևորվել է դատական հայեցողության շրջանակներում իրացվող, ինչպես նաև առարկայական և գործառնության լիազորությունների անջատ ուսումնասիրման անհրաժեշտությունը, որի արդյունքում բացահայտվել են խնդրո առարկային վերաբերող հիմնահարցերը և հայեցողական լիազորությունների իրականացման համար իրավաչափության պայմաններ են առաջարկվել:

**Երրորդ գլխի երկրորդ պարագրաֆը՝** «Վերաքննիչ քաղաքացիական դատարանի առարկայական և գործառնության լիազորությունների տարանջատման հիմնախնդիրները » վերտառությամբ, նվիրված է վերաքննիչ դատարանի լիազորությունները առաջարկվող դասակարգման շրջանակներում ուսումնասիրությանը, դրանց կիրառման առանձնահատկությունների և խնդրահարույց կողմերի բացահայտմանը:

Անդրադառնալով վերաքննիչ քաղաքացիական դատարանի լիազորությունները՝ առարկայականի և գործառնության դասակարգման շրջանակներում ուսումնասիրելու հարցին, հեղինակը նշում է, որ առարկայական լիազորությունները կարելի է բաժանել երկու խմբի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերի և միջանկյալ դատական ակտերի վերաքննության արդյունքում իրացվող լիազորությունների, և փաստում է, որ դրանց կիրառման արդյունքում միշտ որոշվում է վերանայվող դատական ակտի իրավա-

բանական ճակատագիրը: Հեղինակը հիմնավորում է վերաքննիչ դատարանի առարկայական լիազորությունների վերանայման անհրաժեշտությունը և առաջարկում է դրանց այնպիսի շրջանակ սահմանել, որպիսի պայմաններում հնարավոր կլինի լիարժեքորեն ապահովել վերանայվող դատական ակտերի պատճառաբանումը, վերաքննիչ դատարանի կողմից նոր փաստ հաստատելը և դատական ակտը մասնակիորեն բեկանել և փոփոխելը, միջանկյալ դատական ակտերի վերացումը և գործնական նշանակություն ուեցող այլ հարցեր՝ ուղղված դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքների արդյունավետ իրացմանը: Բացի այդ, հեղինակն առանձնացրել է վերաքննիչ դատարանի գործառնության լիազորությունները, անդրադարձել է վերաքննիչ դատարանի կողմից գործի վարույթը կարճելը մի դեպքում առարկայական, մյուս դեպքում՝ գործառնության լիազորություն համարելու հիմնահարցին, վերաքննիչ դատարանի կողմից լրացուցիչ որոշում կայացնելու, գործի վարույթը կասեցնելու, սեփական դատական ակտերը պարզաբանելու, գրավորիակները և թվաբանական սխալները ուղղելու հետ կապված հարցերին, ինչի արդյունքում, ընդհանրացնելով վերաքննիչ դատարանի գործառնության լիազորությունները, փաստել է, որ դրանք անպայմանորեն պետք է ուղղված լինեն վերաքննության կարգով դատական ակտերի վերանայման համար իրավաչափ ու արդյունավետ պայմանների ապահովմանը, ինչպես նաև առարկայական լիազորությունների ճիշտ կիրառմանը:

**Չորրորդ գլուխը՝** «Դատական ակտը վերաքննության կարգով բեկանելու հիմքերը քաղաքացիական դատավարությունում» վերտառությամբ, բաղկացած է երեք պարագրաֆից:

**Չորրորդ գլխի առաջին պարագրաֆում՝** «Դատական ակտի բեկանման հիմքերն ու դասակարգման հիմնախնդիրները» վերտառությամբ, պարզաբանվում են դատական ակտի բեկանման՝ որպես դատական սխալի վերացմանն ուղղված քաղաքացիադատավարական միջոցի առանձնահատկություններն ու հիմնական հատկանիշները, ներկայացվում են բեկանման հիմքերի հասկացությունն ու դասակարգման չափանիշներն ու բացահայտվում են խնդրահարույց հարցերը:

Անդրադառնալով դատական ակտի բեկանմանը, հեղինակը նշում է, որ բեկանումը դատական սխալի վերացմանն ու իրավունքների վերականգնմանն ուղղված քաղաքացիադատավարական միջոց է, որը կիրառվում է միայն օրենքով նախատեսված հիմքերի առկայության պարագայում: Դատական ակտի բեկանման հիմքերը օրենքով սահմանված այն իրավական հանգամանքներն են, որոնք փաստում են դատական ակտի անիրավաչափությունը, առաջին ատյանի դատարանում գործի քննության ընթացքում թույլ տրված խախտումները, որոնք հանգեցրել են դատարանի սխալ իրավակիրառ և սպացուցողական-հաստատողական գործունեությանը: Հեղինակը հիմնավորում է, որ դատական ակտի բեկանման, վերանայման և բեկանման հիմքերը փաստացի չեն նույնանում և իր անհամաձայնությունն է հայտնում ՀՀ իրավակիրառ պրակտիկայում ձևավորված մոտեցման կապակցությամբ: Ընդ որում, հատուկ ընդգծվում է նաև, որ ՀՀ ՔԴՕ-ն դատական ակտի բեկանումը հնարավոր է համարում նաև դատական սխալի բացակայության պայմաններում: Այս առումով կարևորվում է «դատական սխալ» և «արդարադատության սխալ» հասկացությունների տարանջատման անհրաժեշտությունը, և դատական ակտի բեկանման հիմք պետք է համարել ոչ միայն գործի ելքի վրա ազդող նյութական կամ դատավարական իրավունքի նորմերի խախտումները, այլ նաև արդարադատության սխալը՝ այն իրավական հանգամանքները, որոնք ազդում են կոնկրետ գործով կայացված դատական ակտում արտահայտված դատողությունների, եզրակացությունների օրինականության և հիմնավորվածության վրա: Հեղինակը փաստում է նաև, որ դա-

տական ակտի բեկանման հիմք են նյութական և դատավարական իրավունքի նորմերի այն խախտումները, որոնք հանգեցրել են վճռի անօրինականության և չհիմնավորվածության, խախտում են անձի արդար դատաքննության իրավունքը, ինչի հետևանքով դատական ակտը դառնում է ոչ իրավական: Ներկայացվել են դատական ակտի հիմնավորվածության և օրինականության այն պահանջները, որոնց խախտումները հանգեցնում են դատական ակտի ոչ իրավականության, և հիմնավորվում է, որ դատական ակտի՝ ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումներին հակասելու փաստն ինքնին դատական ակտի բեկանման հիմք չի հանդիսանում:

**Չորրորդ գլխի երկրորդ պարագրաֆում՝** «Նյութական իրավունքի նորմերի խախտումը կամ սխալ կիրառումը որպես քաղաքացիական գործերով դատական ակտի բեկանման հիմք» վերտառությամբ, ներկայացված են նյութական իրավունքի նորմերի խախտման կամ սխալ կիրառման դրսևորումները, դրանց ազդեցությունը վիճելի նյութական իրավահարաբերությունների կարգավորման վրա և այս հիմքով դատական ակտի բեկանման առանձնահատկությունները:

Անդրադառնալով նյութական իրավունքի նորմերի ոչ իրավաչափ կիրառման դրսևորումները պարզաբանելու հարցին, հեղինակը հիմնավորում է, որ դատական ակտի բեկանումը պետք է պայմանավորել ոչ միայն իրավական ակտերի սխալ կիրառման և մեկնաբանման հետ, այլև պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ քաղաքացիաիրավական հարաբերությունների կարգավորման աղբյուր են հանդիսանում նաև գործարար շրջանառության սովորույթները, և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի մի շարք հոդվածներ (հոդվ. 347, 353 և այլն) ուղղակիորեն ցուցում են պարունակում քաղաքացիաիրավական հարաբերությունները սովորույթներով կամ պայմանագրերով կարգավորելու մասին: Հեղինակը հիմնավորել է, որ վերաքննիչ դատարանն իրավասու է ստուգել նաև դատական հայեցողության շրջանակներում նյութական իրավունքի նորմերի կիրառման իրավաչափությունը, որոշել, թե դատական հայեցողությունը՝ որպես իրավակիրառ գործունեության տեսակ, որքանով է համաստասխանու արդար դատաքննության իրավունքի տարրերին և ինչ ազդեցություն է ունեցել գործի ելքի վրա: Այս առումով առանձնացվել են նաև նյութական իրավունքի նորմերի սխալ կամ թերի ընկալման, երկիմաստության, նորմի դիսպոզիցիայի ընդհանրական և երկընտրելի բնույթի հետևանքները: Իրավունքի նորմերի սխալ մեկնաբանման դրսևորումները բացահայտելու հարցում կարևորվել են նաև ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումները, որոնք սակայն, ըստ հեղինակի, երբեմն հակասական դրույթներ են պարունակում և ոչ միշտ է, որ նպաստում են իրավակիրառ պրակտիկայի ճիշտ զարգացմանը:

Հեղինակը ՀՀ Սահմանադրական դատարանի որոշումները համարել է ինչպես դատական ակտի վերանայման հիմք՝ նոր հանգամանք, այնպես էլ դրանք դիտարկել է նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտման համատեքստում, հիմնավորելով, որ դատարանի կողմից վճռի հիմքում ՀՀ Սահմանադրությանը հակասող օրենք դնելը կամ օրենքի նորմը դրա սահմանադրաիրավական բովանդակությանը հակառակ մեկնաբանելը պետք է համարել դատական սխալ, եթե դա ազդել է գործի ելքի վրա և կայացված դատական ակտն օրինական ուժի մեջ չի մտել: Պարզվել է նաև, որ դատավարության օրենքն առանց կարգավորման է թողել առաջին ատյանի դատարանի վճռի կամ վերաքննիչ դատարանի որոշման՝ օրինական ուժի մեջ մտնելուց հետո վարչական դատարանի կողմից վճռի կամ որոշման հիմքում ընկած նորմատիվ իրավական ակտն ամբողջությամբ կամ մասնակիորեն անվավեր ճանաչելու քաղաքացիադատավարական հետևանքները: Մինչդեռ, եթե նոր հանգամանք է դիտարկվում օրենքը հակասահմանադրական և անվավեր ճանաչող որոշումը, ապա նույն տրամաբանությամբ պետք է նոր

հանգամանք դիտարկել նաև նորմատիվ իրավական ակտն օրենքին հակասելու հիմքով ամբողջությամբ կամ մասնակիորեն անվավեր ճանաչող դատական ակտը:

Անդրադառնալով ՀՀ միջազգային պայմանագրերի դրույթների սխալ կիրառմանը կամ խախտմանը, հեղինակն ընդգծել է, որ դրանք կարող են և նյութաիրավական և դատավարական նորմեր պարունակել, հետևաբար, դրանք զուտ նյութական իրավունքի նորմերի խախտման համատեքստում դիտարկելն արդարացված համարել չի կարելի:

**Չորրորդ գլխի երրորդ պարագրաֆում՝** «Դատավարական իրավունքի նորմերի խախտումները որպես քաղաքացիական գործերով դատական ակտի բեկանման հիմք» վերտառությամբ, ներկայացված են դատավարական իրավունքի նորմերի սխալ կիրառման կամ մեկնաբանման դրսևորումները, դասակարգման են ենթարկվել այդ խախտումները, որպիսի պայմաններում առանձնացվել, ինքնուրույն վերլուծության են ենթարկվել դատական ակտի անվերապահ և պարտադիր բեկանման հիմքերը:

Հեղինակը հիմնավորել է, որ դատական ակտի բեկանման են հանգեցնում գործի ելքի վրա ազդող դատավարական իրավունքի այն նորմերի խախտումները, որոնք սահմանում են օրենքով նախատեսված հիմքերով որոշակի վարքագիծ դրսևորելու՝ դատարանի պարտականությունը: Ընդ որում, դատավարական նորմերի խախտումները, որպես կանոն, պայմանավորված են քաղաքացիական գործի փաստական կողմը որոշող նորմերի սխալ կիրառմամբ, ինչը դրսևորվում է ապացուցում պահանջող փաստերի շրջանակը որոշելու արդյունքում ապացուցման պարտականության կանոններին անհամապատասխան ապացուցման բեռը գործին մասնակցող անձանց միջև բաշխելու, ապացույցների թույլատրելիության կանոնները խախտելու հանգամանքներով, ինչպես նաև դատավարական ձևի խախտումներով, որոնք էական ազդեցություն ունեն գործով դատական ճշմարտությունը բացահայտելու և դատավարության խնդիրներն իրացնելու հարցում: Ուստի, դատավարական իրավունքի նորմերի խախտումները կարող ենք համարել էական, եթե դրանց սխալ կիրառումը կամ մեկնաբանումը հանգեցրել է գործի սխալ լուծման, այսինքն՝ դատարանը կայացրել է գործն ըստ էության լուծող՝ անօրինական և չհիմնավորված դատական ակտ, կամ կարող էր հանգեցնել գործի սխալ լուծման, այսինքն՝ կասկածի տակ է դրվում գործով կայացված դատական ակտի ճշտությունը և իրավաչափությունը: Այս համատեքստում հեղինակը հիմնավորել է դատական ակտի անվերապահ և պարտադիր բեկանման հիմքերի առանձնացման անհրաժեշտությունը, որպես ելակետ ընդունելով այն հանգամանքը, որ անվերապահ բեկանման հիմքերի առկայության պարագայում ոչ իրավաչափ արդարադատության արդյունքում չի բացառվում գործն ըստ ճիշտ էության լուծող դատական ակտի կայացման հնարավորությունը, իսկ պարտադիր բեկանման հիմքերը ինքնին վկայում են գործի ելքի վրա ազդող դատավարական իրավունքի նորմերի խախտումների մասին: Բացահայտելով դատական ակտի անվերապահ և պարտադիր բեկանման հիմքերի բովանդակությունը՝ հեղինակը եզրահանգել է, որ ՀՀ ՔԴՕ 228-րդ հոդվածի 2-րդ մասում դատական ակտի անվերապահ բեկանման հիմքերը սպառնիչ սահմանված չեն, քանի որ վերաքննիչ դատարանի լիազորությունների սահմանադրաիրավական բացահայտումից պարզ է դառնում, որ բոլոր դեպքերում չպատճառաբանված դատական ակտերը ենթակա են բեկանման: Իսկ բողոքաբերի կողմից գործի լուծման համար էական նշանակություն ունեցող ապացույց ներկայացնելը, որն իր կամքից անկախ պատճառներով չէր ներկայացվել առաջին ատյանի դատարանում, պետք է դիտարկել բեկանման պարտադիր հիմք, քանի որ այստեղ գործ ունենք գործի ելքի վրա ազդող դատավարական նորմի խախտման հետ: Ընդ որում, հեղինակը քննադատաբար է մոտեցել իրավակիրառ դատական պրակտիկայի այն մոտեցմանը, որ վերաքննիչ բողոքում դատական ակտի անվերապահ բեկանման հիմքերի վրա

հղում չկատարելը վերաքննիչ դատարանի գրկում է դրանց անդրադառնալու հնարավորությունից: Բացի այդ, բեկանման անվերապահ հիմքերի վերլուծության շրջանակներում բացահայտվել են դատական նիստի և դատական նիստից դուրս կատարվող դատավարական գործողությունների արձանագրման հիմնախնդիրները, փաստվել է, դատավարության օրենքում անտեսվել է ձայնային արձանագրման և համակարգչային համառոտագրման՝ միմյանց չհամապատասխանելու հանգամանքը կամ, եթե դատական նիստի արձանագրումն իրականացվել է այնպիսի էական թերություններով, ինչը լիարժեք հնարավորություն չի տալիս դատարանին ստուգելու ստորադաս դատական ատյանում գործի քննության ընթացքում կատարված գործողությունները:

**Հինգերորդ գլուխը՝ «Վերաքննիչ քաղաքացիական դատարանի ակտերի իրավական բնորոշման հիմնախնդիրները»** վերտառությամբ, բաղկացած է երեք պարագրաֆներից:

**Հինգերորդ գլխի առաջին պարագրաֆում՝ «Վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշումների հասկացությունը և տեսակները»** վերտառությամբ, ուսումնասիրվել են ենթարկվել վերաքննիչ դատարանի որոշումները, բացահայտվել է դրանց էությունը և իրավական բնույթը, դատական ակտերի դասակարգման շրջանակներում վերլուծության են ենթարկվել դրանց առանձին տեսակներ:

Հեղինակը նշել է, որ վերաքննիչ դատարանի որոշումները առաջին ատյանի դատարանի՝ քաղաքացիական գործերով կայացված դատական ակտերի վերաքննիչ բողոքարկման և դրանց վերաքննության կապակցությամբ կայացվող՝ սուբյեկտիվ իրավունքների և օրինական շահերի պաշտպանությանն ուղղված արդարադատության ակտեր են, որոնցում արտացոլվում են վերաքննիչ բողոքի քննության, ստորադաս դատարանի դատական ակտի օրինականությունն ու հիմնավորվածությունը ստուգելու վերաբերյալ վերջնական արդյունքները, ինչպես նաև բողոքի քննության ընթացքում ծագող դատավարական հարցերի լուծման կապակցությամբ վերաքննիչ դատարանի դատողություններն ու եզրահանգումները: Ընդ որում, ՔԳ-Օ-ի՝ դատական ակտերի դասակարգման իրավակարգավորումը թույլ չի տալիս հստակորեն բացահայտել վերաքննիչ դատարանի որոշումների էությունը, պարզաբանել դատական ակտերի համակարգում դրանց սուբսիդիար դատավարական բնույթը, և հեղինակն անընդունելի է համարել վճիռների վերանայման արդյունքում կայացվող որոշումները գործն ըստ էության լուծող դատական ակտ դիտարկելու՝ օրենսդրի մոտեցումը: Առաջարկվել է ՔԳ-Օ ներդնել դատական ակտերի դասակարգման այնպիսի համակարգ, որի հիմքում ընկած կլինի դատական ակտով կարգավորման ենթակա իրավահարաբերության բնույթն ու եզրահանգումների նշանակությունը, որիպիսի պայմաններում առանձնացվել են դատարանի՝ գործն ըստ էության լուծող, գործը լուծող և միջանկյալ դատական ակտերը: Հեղինակը դասակարգման է ենթարկել նաև վերաքննիչ դատարանի միջանկյալ դատական ակտերը՝ հիմք ընդունելով դրանց նպատակային ուղղվածությունը, կայացման ձևը, բողոքարկման ենթակա լինելու և անձանց իրավունքներին անմիջականորեն ազդելու կամ ներգործելու հանգամանքները:

**Հինգերորդ գլխի երկրորդ պարագրաֆում՝ «Վերաքննիչ քաղաքացիական դատարանի ակտերին ներկայացվող պահանջները»** վերտառությամբ, ներկայացված և վերլուծված են ՀՀ օրենսդրությամբ, այդ թվում՝ Եվրոպական դատարանի վճիռներով և ՀՀ Սահմանադրական դատարանի որոշումներով վերաքննիչ դատարանի որոշումներին ներկայացվող իրավական պահանջները:

Հեղինակը նշում է, որ դատական ակտին ներկայացվող պահանջները ՀՀ օրենսդրությամբ ամրագրված այն հրամայական դրույթներն ու իրավական պայմաններն են, ո-



րոնք ապահովում են դատական ակտի իրավական գործողությունը, և առանձնացնում է վերաքննիչ դատարանի որոշումներին ներկայացվող ձևական պահանջները, որոնք ներառում են դատական ակտերի ձևն ու կառուցվածքը սահմանող դատավարական կանոնները և էական պահանջները, որոնք ներառում են դատական ակտի էությանը և բովանդակությանը վերաբերող պահանջները: Վերլուծելով վերաքննիչ դատարանի որոշումներին ներկայացվող ձևական պահանջները, հեղինակը պարզել է, որ վերաքննիչ բողոքի քննության արդյունքներով կայացվող որոշման բովանդակությունը սահմանող նորմն ընդհանրապես դրույթ չի պարունակում վերաքննիչ դատարանի կողմից բողոքը բավարարելու, կամ ամբողջությամբ կամ մասնակիորեն մերժելու, ինչպես նաև բողոքում ներկայացված յուրաքանչյուր պահանջը բավարարելու կամ մերժելու վերաբերյալ եզրահանգումների պարտադիրության վերաբերյալ: Իրավակարգավորման ներկայիս պայմաններում վերաքննիչ դատարանի որոշման եզրափակիչ մասի բովանդակությունը սահմանելու հարցը մնում է բաց և հատկապես խնդրահարույց է այն առումով, որ ՔԳՕ-ի 220-րդ հոդվածի 3-րդ մասում ընդամենը խոսվում է կողմերի միջև դատական ծախսերը բաշխելու, այդ թվում՝ առաջին ատյանի դատարանում գործի քննության հետ կապված ծախսերը բաշխելու մասին: Մինչդեռ, վերաքննիչ դատարանի կողմից դատական ծախսերը կողմերի միջև բաշխելու հարցի լուծումն ուղղակիորեն կապված է վերաքննիչ բողոքը մերժելու, ամբողջությամբ կամ մասնակիորեն բավարարելու վերաբերյալ դատարանի եզրահանգումներից:

Հեղինակը որպես ինքնուրույն ձևական պահանջ է առանձնացրել և վերլուծել դատական ակտի պատճառաբանվածությունը, ինչպես նաև հիմնավորել է, որ դատական ակտերը պատճառաբանելու ձևական պահանջը վերաբերում է նաև վերաքննիչ դատարանի միջանկյալ դատական ակտերին և բխում է ՀՀ սահմանադրական դատարանի 09.04.2007թ. ՄԳՈ-690 որոշման բովանդակությունից:

Անդրադառնալով վերաքննիչ դատարանի ակտի էությանը ներկայացվող պահանջներին՝ հեղինակը համապարփակ վերլուծության է ենթարկել վերաքննիչ դատարանի որոշումների օրինականության, հիմնավորվածության, լրիվության որոշակիության, անպայմանականության պահանջները, բացահայտել է դրանց ապահովման հիմնական իրավական պայմանները և հիմնավորել է, որ վերաքննիչ դատարանի որոշումներին պետք է ներկայացնել նաև նպատակահարմարության լրացուցիչ պահանջ, որը հնարավորություն կտա հիմնավորելու դատական հայեցողության շրջանակներում վերաքննիչ դատարանի կողմից կատարվող՝ անձի դատական պաշտպանության իրավունքի լիարժեք իրականացմանն ուղղված գործողությունների արդյունավետությունը, բացահայտել դրանց սոցիալական նպատակն ու իրավական նշանակությունը:

**Հինգերորդ գլխի երրորդ պարագրաֆը՝** «Վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշումների իրավական գործողությունը» վերտառությամբ, նվիրված է վերաքննիչ դատարանի ակտերի իրավական գործողության մեջ մտնելու առանձնահատկությունների, օրինական ուժի հատկանիշների վերլուծությանը, դրանց քաղաքացիադատավարական բովանդակության բացահայտմանը:

Անդրադառնալով վերաքննիչ դատարանի որոշումների իրավական գործողությանը, հեղինակը նշում է, որ այն սկսվում է օրենքով սահմանված որոշակի պահից և պայմանավորված է դատական ակտի օրինական ուժի հետևանքներով կամ իրավական այն հատկանիշներով, որոնք ապահովում են վերաքննիչ դատարանի որոշումների կայունությունը, դրանց մեջ պարունակվող եզրահանգումների և սահմանված պատվիրանների կատարումը: Ընդ որում, ըստ վերաքննիչ դատարանի՝ գործն ըստ էության լուծող, գործը լուծող և միջանկյալ դատական ակտերի շրջանակի, հեղինակի կողմից որպես կայու-

նությունն ապահովող հատկանիշներ առանձնացվել և վերլուծվել են անհերքելիությունը, բացառիկությունը և նախադատելիությունը, իսկ պարտադիրությունն ու կատարելիությունը միասնաբար դիտարկվել են որպես վերաքննիչ դատարանի որոշումների կատարումն ապահովող հատկանիշներ: Նշվել է, որ վերաքննիչ դատարանի որոշումն օրինական ուժի մեջ մտնելու իրավակարգավորման ներկայիս պայմաններում դատական ակտի օրինական ուժի հատկանիշները ամբողջական և լիարժեք ձևով կարող են դրսևորվել միայն վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշման կայացման պահից՝ բացառությամբ ԲԴՕ 231-րդ հոդվածով վճռաբեկ բողոքի ձևին և բովանդակությանը ներկայացվող պահանջների խախտման հիմքով բողոքը վերադարձնելու դեպքի, ինչպես նաև վճռաբեկ դատարանի կողմից վերաքննիչ դատարանի դատական ակտն օրինական ուժի մեջ թողնելու մասին որոշումը հրապարակելու պահից, քանի որ վճռաբեկ դատարանի վերոնշյալ որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման (ԲԴՕ հոդվ. 241<sup>2</sup>): Ընդ որում, դատական ակտի կայունությունն ապահովող հատկանիշները, բացառությամբ նախադատելիության, հավասարապես վերաբերում են վերաքննիչ դատարանի թե՛ վերջնական, թե՛ միջանկյալ դատական ակտերին և իրենց գործողության առանձնահատկություններով տարբերվում են առաջին ատյանի դատարանի ակտերի օրինական ուժի հատկանիշներից: Այս համատեքստում հեղինակն արձանագրում է, որ վերաքննիչ դատարանի միջանկյալ դատական ակտերի նախադատելիության հատկանիշով օժտված չեն, իսկ ՀՀ ԲԴՕ-ով նախատեսված իրավակարգավորումը վերաքննիչ դատարանի որոշումների բացառիկության, անհերքելիության, նախադատելիության հատկանիշների մասով պետք է թերի համարել այն առումով, որ ապացուցումից ազատելու, հայցադիմումի ընդունումը մերժելու կամ գործի վարույթը կարճելու հիմքերի շարքում խոսվում է միայն դատարանի վճիռների մասին, ինչը, հավանաբար, ՀՀ քաղաքացիական դատավարությունում լրիվ վերաքննության ինստիտուտի երբեմնի գործողության մնացորդներից է:

**Եզրակացության** մեջ ընդգրկված են հետազոտության հիմնական արդյունքները և հեղինակի եզրահանգումները, ինչպես նաև օրենսդրության կատարելագործմանն ուղղված առաջարկությունները, որոնք ամփոփ հանգում են հետևյալին.

- ՀՀ ԲԴՕ-ն (հոդվ. 215-րդ) ուղղակիորեն նախատեսում է վերաքննիչ դատարանի կողմից միևնույն վարույթի շրջանակներում մի քանի անձանց վերաքննիչ բողոքների համատեղ քննությունը, ինչը որպես վերաքննության առանձին տեսակ թույլ է տալիս առանձնացնել ինչպես համատեղ, այնպես էլ հանդիպակաց վերաքննությունները: Համատեղ վերաքննությունը գործի քննությանը համատեղ հանդես եկող անձանց (դատակիցների, ինչպես նաև հայցվորի կամ պատասխանողի և դրանց կողմում վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձանց) վերաքննիչ բողոքի հիման վրա իրականացվող վերաքննությունն է: Ընդ որում, համատեղ վերաքննության պարագայում որոշիչ է այն, որ բողոքարկողները հանդես գան նույն պահանջով: Այս դեպքում պարտադիր չէ, որ բողոքարկողները վերաքննիչ բողոքի հիմքում դնեն նույն հիմքերն ու հիմնավորումները:

- Հանդիպակաց վերաքննությունն առկա է բոլոր այն դեպքերում, երբ գործին մասնակցող անձինք, որոնց շահերը քաղաքացիական դատավարությունում բացառում են միմյանց, իրականացնելով իրենց վերաքննիչ բողոքարկման իրավունքը, ներկայացրել են տրամաբանորեն հակառակ պահանջներ: Հանդիպակաց վերաքննության հիմքում պետք է դնել վերաքննիչ բողոքում ներկայացված պահանջների հակասությունը, միմյանց բացառելու տրամաբանությունը, որոնք քննության առարկա պետք է դառնան վերաքննիչ վարույթի շրջանակներում: Այն դեպքում, երբ հակադիր շահեր ունեցող դատա-

վարության մասնակիցները վերաքննիչ բողոքներում ներկայացնում են նույն պահանջները, մենք գործ ունենք համատեղ վերաքննության հետ: Ընդ որում, գործող իրավակարգավորման պայմաններում հանդիպակաց վերաքննությունը կիրառելի է միայն առաջին ատյանի դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերի (վճիռների) վերանայման պարագայում: Համատեղ վերաքննությունը կարող է կիրառվել առաջին ատյանի դատարանի թե՛ միջանկյալ, թե՛ գործն ըստ էության լուծող դատական ակտերի վերանայման պարագայում:

- Գտնում ենք, որ խառը վերաքննություն պետք է համարել դատական ակտի վերանայման այն մոդելը, երբ վերաքննիչ դատարանն օժտված է գործն ամբողջ ծավալով կրկնակի քննելու և արդյունքում՝ գործն ըստ էության լուծող և վիճելի նյութական իրավահարաբերությունն անմիջականորեն կարգավորող դատական ակտ կայացնելու և, միաժամանակ, օրենքով նախատեսված դեպքերում գործը ստորադաս դատարան՝ նոր քննության ուղարկելու իրավասությամբ:

- ՀՀ ՔԴ-Օ-ի հիման վրա ևս կարելի է առանձնացնել արտակարգ վերաքննությունը, այն է՝ նոր կամ նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտի վերանայման վարույթը, որը կիրառելի է միայն օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի բողոքարկման պարագայում: Մեր կարծիքով, արտակարգ վերաքննության պարագայում որոշիչը ոչ թե վերանայվող դատական ակտի վերջնական բնույթն ու օրինական ուժի մեջ լինելու հանգամանքն է, այլև բողոքարկման հիմքերի բացառիկությունը:

- Գտնում ենք, որ ներկայումս ՀՀ դատական համակարգը (դատարանակազմությունը) կարող է լիարժեքորեն երաշխավորել քաղաքացիական դատավարության կարգով անձանց սուբյեկտիվ իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը, ապահովել դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքի իրացումը, սակայն անհրաժեշտ ենք համարում նաև ոչ լրիվ վերաքննության ինստիտուտում մեր կողմից առաջարկվող փոփոխությունների ներդրումը, որոնք անմիջականորեն ուղղված են ՀՀ-ում արդարադատության արդյունավետության բարձրացմանը: Մասնավորապես՝

1. Անհրաժեշտ է վերանայել ՀՀ ՔԴ-Օ 218-րդ հոդվածով նախատեսված վերաքննիչ բողոք բերելու սահմանափակումները՝ որպես ելակետ ընդունելով միայն բողոքարկողի կողմից ստորադաս դատական ատյանում գործի փաստական հանգամանքների վերաբերյալ դիրքորոշում հայտնելու պարտադիրությունը: Անսահմանափակ դատական պաշտպանության իրավունքի ամրագրման պայմաններում գույքային պահանջներով վերաքննության սահմանափակումներ օրենքով նախատեսելը հիմնավորված չէ: Վերաքննության իրավունքից հրաժարվելու վերաբերյալ համաձայնությունն առոչինչ է և իրավական հետևանքներ առաջացնել չի կարող: Նպատակահարմար է օրենսգիրք ներդնել «վերաքննության իրավունքից չօգտվելու մասին համաձայնություն» հասկացությունը, այն էլ՝ միայն հաշտության համաձայնություն կնքելու շրջանակներում, երբ կողմերը փաստացի կատարել են հաշտության համաձայնությամբ նախատեսված բոլոր պարտավորությունները կամ պայմանավորվածություն են ձեռք բերել դրանք հետագայում կատարելու շուրջ:

2. Անհրաժեշտ է հստակեցնել քաղաքացիական դատավարությունում վերաքննիչ դատարանի կառուցակարգային կարգավիճակից բխող գործառույթը, որն աներկբայորեն պետք է հանգի դատական ակտը վերանայելու միջոցով գործին մասնակցող անձանց սուբյեկտիվ իրավունքների և օրինական շահերի պաշտպանությանը: ՀՀ ՔԴ-Օ 210, 217, 220, 221, 221.3-րդ և մի շարք այլ հոդվածները պետք է խմբագրել այնպես, որպեսզի դրանց բովանդակությունից հստակ երևա, որ ներկայումս ՀՀ-ում սահմանված վերաքննության կանոններով վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքի քննության արդ-

յունքում վերանայում է բողոքարկված դատական ակտը: Բացի այդ, ՔԴՕ 219-րդ հոդվածի 2-րդ մասում «վերաքննիչ դատարանը բեկանում է գործը» արտահայտության փոխարեն պետք է օգտագործել «վերաքննիչ դատարանը բեկանում է դատական ակտը և գործն ուղարկում է համապատասխան առաջին ատյանի դատարան՝ նոր քննության» արտահայտությունը:

3. Գտնում ենք, որ վերաքննիչ դատարանը կարող է նոր ապացույցներ ընդունել, եթե դրանք առաջին ատյանի դատարանում գործի քննության ժամանակ չեն ներկայացվել գործին մասնակցող անձանց կամքից անկախ պատճառներով, սակայն վերաքննիչ դատարանը նոր ապացույցի հիման վրա նոր փաստ հաստատել չի կարող: Բացի այդ, ՔԴՕ 219-րդ հոդվածի 2-րդ մասում «կողմերի կամքից անկախ հանգամանքներով» արտահայտության փոխարեն անհրաժեշտ է օգտագործել «գործին մասնակցող անձանց կամքից անկախ հանգամանքներով» արտահայտությունը, քանի որ կողմերից բացի վերաքննիչ բողոքարկման իրավունքով են օժտված նաև երրորդ անձինք: Հետևաբար, ՔԴՕ 219-րդ հոդվածի 2-րդ մասը պետք է ունենա հետևյալ շարադրանքը. «Վերաքննիչ դատարանը բողոքը քննելիս հիմնվում է միայն այն ապացույցների վրա, որոնք ներկայացվել են առաջին ատյանի դատարանին: Վերաքննիչ դատարանը նոր ապացույցն ընդունում է միայն այն դեպքում, երբ առաջին ատյանի դատարանում գործի քննության ժամանակ այն չի ներկայացվել գործին մասնակցող անձանց կամքից անկախ հանգամանքներով: Վերաքննիչ դատարանը նոր ապացույցի հիման վրա նոր փաստ հաստատելու իրավունք չունի, և տվյալ պարագայում բեկանում է դատական ակտը, գործն ուղարկելով համապատասխան առաջին ատյանի դատարան՝ նոր քննության, եթե գտնում է, որ նոր ապացույցն էական նշանակություն ունի գործի լուծման համար»: ՔԴՕ 219-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ պարբերությունում «ապացույցը» բառից հետո անհրաժեշտ է ավելացնել «կամ գործին մասնակցող անձի պահանջը հիմնավորող փաստը» արտահայտությունը, որը կներառի բոլոր այն դեպքերը, երբ գործին մասնակցող անձը հղում է կատարում պահանջը հիմնավորող փաստի վրա, սակայն սեփական միջոցներով ապացույցը ձեռք բերելու հնարավորություն չունի:

4. Օրենսդրորեն պետք է սահմանել ոչ միայն վերաքննիչ բողոքի շրջանակներում չվիճարկվող փաստերը որպես հիմք ընդունելու վերաքննիչ դատարանի պարտականությունը, այլև դրանց անդրադառնալու արգելքը: Փաստի հարցում վերաքննության սահմանները կարող են ենթադրել միայն օրենքի պահանջների պահպանմամբ հետազոտված ապացույցների գոյությունը: ՔԴՕ 219-րդ հոդվածի 3-րդ մասում պետք է սահմանել. «Վերաքննիչ դատարանում բողոքի քննության ժամանակ առաջին ատյանի դատարանում հաստատված փաստերն ընդունվում են որպես հիմք, բացառությամբ այն դեպքերի, երբ դրանք հաստատվել են հետազոտման կանոնների ակնհայտ խախտման արդյունքում կամ, երբ բողոքում վիճարկվում է այդ փաստը, և վերաքննիչ դատարանը հանգում է այն եզրակացության, որ տվյալ փաստի վերաբերյալ եզրակացության հանգելիս առաջին ատյանի դատարանը թույլ է տվել ակնհայտ սխալ»:

5. Հետազոտման կարգը սահմանող կանոնների խախտմամբ ստացված ապացույցները վերաքննիչ դատարանում կրկին հետազոտման ենթակա չեն, չեն կարող դրվել վերաքննիչ դատարանի որոշման հիմքում, և օրենքով անհրաժեշտ է սահմանել այս հիմքով վերադաս դատական ատյանի համար առաջին ատյանի դատարանի դատական ակտը բեկանելու պարտականություն:

6. Վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի շրջանակը պետք է որոշի հիմնվելով ինչպես վերաքննիչ բողոքի, այնպես էլ վերաքննիչ բողոքի պատասխանի (եթե այդպիսին ներկայացվել է) վրա,

ղեկավարվելով օրենքով:

7. Վերաքննիչ բողոքարկման իրավունքը ոչ միայն դատական պաշտպանության իրավունքի իրականացման ձև է, այլև ստորադաս դատական ատյանում արդար դատաքննության իրավունքի դատական պաշտպանության միջոց՝ այն իմաստով, որ առաջին ատյանի դատարանում գործի ելքի վրա ազդող ցանկացած նյութական կամ դատավարական իրավունքի խախտում հանգեցնում է արդար դատաքննության իրավունքի տարրերի խախտման: ՀՀ ՔԳՕ 205-րդ հոդվածում վերաքննիչ բողոք բերելու իրավունք ունեցող սուբյեկտների շրջանակը պետք է լրացնել այլ անձանց իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանությամբ հանդես գալու իրավասություն ունեցող անձանցով, իսկ վերաքննիչ բողոքարկման հնարավորություն նրանց ընձեռել միայն օրենքով ուղղակիորեն նախատեսված դեպքերում:

Իրավակարգավորման ներկայիս պայմաններում նոր կամ նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտի վերանայման վարույթ նախաձեռնելու նպատակով վերաքննիչ բողոք բերելու իրավունք ունեն գործին մասնակցող անձինք, նրանց իրավահաջորդները, եթե վիճելի կամ դատական ակտով նախատեսված իրավահարաբերությունը թույլ է տալիս իրավահաջորդություն, ինչպես նաև գլխավոր դատախազը և նրա տեղակալները՝ օրենքով նախատեսված դեպքերում: Հետևաբար, գործին մասնակից չդարձված անձինք նոր կամ նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտը վերանայելու պահանջով դատարան դեմելու իրավունք չպետք է ունենան, քանի որ նրանց գործի քննությանը չներգրավելը, վերջիններիս իրավունքների և պարտականությունների վերաբերյալ դատական ակտ կայացնելը միանշանակորեն հանգեցնում են դատական սխալի և վկայում են դատարանի կողմից ակնհայտորեն թույլ տրված իրավունքի նորմերի խախտումների մասին:

8. «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի կարգավորումից դուրս է մնում առաջին ատյանի դատարանի օրինական ուժի մեջ մտած ակտերը նոր և նոր երևան եկած հանգամանքներով վերաքննության կարգով բողոքարկելու հարցը, քանի որ հոդվածում կարգավորված է՝ անկախ գործի քննությանը մասնակցությունից միայն գլխավոր դատախազի և նրա տեղակալների կողմից վճռաբեկության կարգով բողոքարկելու հնարավորության հարցը, իսկ մյուս բոլոր դատախազներն օգտվում են վերաքննիչ բողոքարկման իրավունքից միայն գործի քննությանը մասնակցելու փաստի ուժով: Հետևաբար, «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդված 6-րդ մասում «վճռաբեկ բողոք» բառերի կողքին պետք է ավելացնել «վերաքննիչ բողոք» բառակապակցությունը:

9. Առաջարկվում է առանձնացնել վերաքննության օբյեկտ (բողոքարկման արդյունքում ամբողջությամբ կամ մասնակիորեն վերանայման ենթակա դատական ակտ) և առարկա հասկացությունները՝ որպես ելակետ ընդունելով այն հանգամանքը, որ վերաքննիչ դատարանը, կաշկանդված լինելով վերաքննության օբյեկտով, վերաքննության առարկայով (վերաքննիչ բողոքում ներկայացված պահանջով) կաշկանդված չէ:

10. Վերաքննության կարգով անմիջականորեն բողոքարկման ենթակա պետք է լինի գործին մասնակցող անձի արդար դատաքննության իրավունքը խախտող յուրաքանչյուր դատական ակտ, եթե դրա արդյունքում հնարավոր է վերացնել այդ խախտումը: Իրավակարգավորման ներկայիս պայմաններում վերաքննիչ բողոքարկման իրավունքի օբյեկտ կարող են լինել ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ օրինական ուժի մեջ չմտած և օրինական ուժի մեջ մտած՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերը, իսկ վերաքննության օբյեկտ են հանդիսանում միայն օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը, քանի որ վերաքննիչ դատարանը բողոքը վերադարձ-

նելու հիմքերի բացակայության դեպքում վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու մասին որոշումը կայացնում է բողոք բերելու համար սահմանված ժամկետը լրանալուց հետո՝ մեկամսյա ժամկետում: Ուստի անհրաժեշտ է ՀՀ ԶԳ-Օ 140-րդ հոդվածի 1-ին մասում ավելացնել «եթե գործն ըստ էության լուծող դատական ակտի դեմ վերաքննիչ բողոք չի բերվել» արտահայտությունը և առանձին նորմով սահմանել, որ վերաքննիչ դատարանի կողմից բողոքի ընդունումը մերժելու կամ վերադարձնելուց հետո թերությունները շտկելու համար սահմանված ժամկետի ավարտից հետո այն նորից չներկայացնելու կամ ներկայացնելու դեպքում՝ վերաքննիչ դատարանի կողմից բողոքը չընդունելու պահից առաջին ատյանի դատարանի վճիռը մտնում է օրինական ուժի մեջ: Բացի այդ, ՀՀ դատական օրենսգրքի 39-րդ հոդվածի 2-րդ կետի՝ «վերաքննիչ դատարանը միջանկյալ դատական ակտերը վերանայում է օրենքով նախատեսված բացառիկ դեպքերում» ձևակերպումից պետք է հանել «բացառիկ» բառը, ինչը հոդվածի շարադրանքն առավել կհամապատասխանեցնեի դատական պաշտպանության իրավունքի իրականացման հիմնադրույթներին:

Նոր կամ նոր երևան եկած հանգամանքներով վերաքննիչ դատարանի կողմից վերանայման ենթակա պետք է լինեն օրինական ուժի մեջ մտած բոլոր այն դատական ակտերը, որոնք ենթակա են բողոքարկման, վճարման կարգադրությունները, որոնք ստացել են օրինական ուժ և ձեռք են բերել օրինական ուժի մեջ մտած վճռի հատկանիշները:

11. Միջանկյալ դատական ակտն անմիջականորեն վերաքննության կարգով բողոքարկելու օրենսդրական հնարավորության բացակայությունը անձին չի գրկում այն գործն ըստ էության լուծող դատական ակտի բողոքարկման շրջանակներում վիճարկելու հնարավորությունից:

12. ԶԳ-Օ 210-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի՝ «դատարանի անվանումը, որի կայացրած վճռի դեմ բերվում է բողոքը, գործի համարը և վճռի կայացման տարին, ամիսը, ամսաթիվը» շարադրանքում «վճիռ» բառի փոխարեն առավել նպատակահարմար է օգտագործել «դատական ակտ» եզրույթը, քանի որ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով բողոքարկման ենթակա են ինչպես առաջին ատյանի դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերը՝ վճիռները, այնպես էլ միջանկյալ դատական ակտերը:

13. ԶԳ-Օ 210-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ և 5-րդ կետերի շարադրանքում «ազդել է գործի ելքի» արտահայտության փոխարեն գործածել «բողոքարկողի կարծիքով դատական ակտի բեկանման հիմք է հանդիսանում» արտահայտությունը, քանի որ նյութական կամ դատավարական իրավունքի խախտման՝ գործի ելքի վրա ազդելու հանգամանքը բացառապես պետք է գնահատվի դատարանի կողմից:

14. Գործնականում ամբողջությամբ կամ մասնակի կարող է բողոքարկվել առաջին ատյանի դատարանի վճռի միայն եզրափակիչ մասը, քանի որ ներկայումս վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքը բավարարելու և թերի կամ սխալ պատճառաբանված դատական ակտը պատճառաբանելու լիազորություն չունի, իսկ դատարանին վերջինիս լիազորությունների մեջ չմտնող դատավարական գործողություն կատարելու պահանջով դիմելն իմաստագուրկ է:

15. Հայցի իրավունքի նախադրյալներն անհրաժեշտ են միայն առաջին ատյանի դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերի վերաքննիչ բողոքարկման համար: Միջանկյալ դատական ակտերի վերաքննիչ բողոքարկման պարագայում դրանք որևէ իրավական նշանակություն չունեն:

16. Օրենսդրորեն առավել նպատակահարմար է տարանջատել վերաքննիչ բողոքարկման իրավունքի նախադրյալների բացակայության և բողոքարկման իրավունքի ի-

րականացման կարգը խախտելու քաղաքացիադատավարական հետևանքները: Հետևաբար, դատավարության օրենսգրքում անհրաժեշտ է առանձնացնել վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու և վերադարձնելու հիմքերը, իսկ վերաքննիչ դատարանին բողոքի ընդունումը մերժելու հնարավորություն ընձեռել, այն է՝ վերաքննիչ դատարանը մերժում է վերաքննիչ բողոքի ընդունումը, եթե՝

- բողոքը ներկայացրել է այն անձը, ով ստորադաս դատարանի դատական ակտը բողոքարկելու իրավունք չունի.

- բողոքարկվել է այն դատական ակտը, որը ենթակա չէ բողոքարկման.

- վերաքննիչ բողոքը բերվել է սահմանված ժամկետը լրանալուց հետո և դատարանը մերժել է բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին միջնորդությունը.

- դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելուց հետո անցել է 20 տարի:

Վերաքննիչ դատարանը բողոքը վերադարձնում է, եթե՝

- չեն պահպանվել օրենսգրքի 210-րդ հոդվածի պահանջները.

- վերաքննիչ բողոքը բերվել է սահմանված ժամկետը լրանալուց հետո և միջնորդություն չի պարունակում բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին.

- բողոքաբերը մինչև վերաքննիչ դատարանի կոմից վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու մասին որոշում կայացնելը դիմում է ներկայացրել այն վերադարձնելու կապակցությամբ.

- գործին մասնակցող անձանց միջև առկա է վերաքննության իրավունքից չօգտվելու մասին համաձայնություն, և նման համաձայնություն կնքած մյուս կողմը չի համաձայնվել գործը վերաքննիչ դատարանում քննելու վերաբերյալ:

Վերաքննիչ բողոքը վերադարձնելուց հետո բողոքում թույլ տրված խախտումները վերացվելու և որոշումն ստանալուց հետո՝ երկշաբաթյա ժամկետում, կրկին ներկայացվելու դեպքում բողոքը համարվում է դատարանում ընդունված: Բողոքը կրկին ներկայացվելու դեպքում խախտումները վերացնելու համար նոր ժամկետ չի տրամադրվում:

17. ՀՀ ՔԴՕ-ի 220-րդ հոդվածի 2-մասը պետք է լրացնել հետևյալ բովանդակությամբ ունեցող 6-րդ կետով. «վերաքննիչ բողոքը մերժելու կամ այն լրիվ կամ մասնակիորեն բավարարելու վերաբերյալ դատարանի եզրահանգումները, ինչպես նաև եզրահանգումների արդյունքում դատական ակտն օրինական ուժի մեջ և անփոփոխ թողնելու, ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանելու և փոփոխելու վերաբերյալ դատարանի հրամայական դատողությունները»:

18. ՔԴՕ 220-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետում. «գործով պարզված և վերաքննիչ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը» ձևակերպումից անմիջապես հետո առաջարկում ենք ավելացնել «և այն ապացույցները, որոնց հիման վրա դատարանը հանգել է որևէ եզրահանգման, այդ թվում՝ հաստատել է նոր փաստ կամ հաստատված չի համարել առաջին ատյանի դատարանի կողմից հաստատված փաստը», ինչպես նաև առանձին կետով սահմանել վերաքննիչ դատարանի որոշումը բողոքարկելու կարգը:

19. Գտնում ենք, որ ՔԴՕ 221<sup>1</sup>-րդ հոդվածը պետք է վերաշարադրել հետևյալ բովանդակությամբ. «Վերաքննիչ դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերն օրինական ուժի մեջ են մտնում հրապարակման պահից մեկ ամիս հետո, եթե դրանց դեմ վճարել բողոք չի բերվում»: Անհրաժեշտ է մեկ ընդհանուր նորմով սահմանել նաև, որ դատարանը դատական նիստում հրապարակում է դատական ակտի եզրափակիչ մասը:

20. ՔԴՕ 21-րդ հոդվածի 2-րդ մասի երկրորդ նախադասությունը պետք է վերաշարադրել հետևյալ կերպ. «Գործին մասնակցող անձը ինանաբացարկի միջնորդություն

կարող է ներկայացնել, իսկ դատավորը ինքնաբացարկ կարող է հայտնել միայն մինչև դատաքննությունն սկսվելը, բացառությամբ այն դեպքերի, երբ ինքնաբացարկի հիմքն ի հայտ է եկել դատաքննության ընթացքում, կամ երբ անձը կապացուցի, իսկ դատավորը կհիմնավորի, որ ինքնաբացարկի հիմքն իրեն հայտնի է դարձել դատաքննությունն սկսվելուց հետո և մինչ այդ չէր կարող հայտնի լինել»:

21. Վերաքննության փուլում բողոքաբերի սուբյեկտիվ իրավունքների, այդ թվում՝ արդար դատաքննության իրավունքի լիարժեք պաշտպանության նպատակով անհրաժեշտ է վերաքննիչ բողոքի հիմքերն ու հիմնավորումները լրացնելու հնարավորություն ընձեռնել, եթե դա չի հանգեցնում վերաքննիչ բողոքի էության փոփոխության և դատարանն ապահովում է գործին մասնակցող անձի՝ վերաքննիչ բողոքի լրացված հիմքերի և հիմնավորումների վերաբերյալ պատասխան ներկայացնելու հնարավորությունը: Մեր կարծիքով վերաքննիչ բողոքի հիմքերն ու հիմնավորումները, բողոքի առարկան փոխելու վերաբերյալ տնօրինչական գործողությունների սահմանափակումները կարող են կիրառվել միայն արդեն իսկ հարուցված վերաքննության պայմաններում: Գտնում ենք, որ մինչև վերաքննիչ դատարանի կողմից բողոքը վարույթ ընդունելու մասին որոշում կայացնելը բողոքաբերի կողմից բողոքը հետ վերցնելու պարագայում ՀՀ ՔԳՕ 213-րդ հոդվածի 3-րդ մասի ուժով պետք է ամրագրել վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին որոշումը ստանալու պահից երկշաբաթյա ժամկետում այն կրկին դատարան ներկայացնելու հնարավորությունը:

22. Գտնում ենք, որ գործը ողջամիտ ժամկետում քննելու պահանջի խախտման պարագայում անհրաժեշտ է օրենսգրքում հատուկ սահմանել, որ տվյալ իրավունքի խախտման հիմքով կարգապահական վարույթ կարող է հարուցվել նաև մինչև վերջնական դատական ակտի կայացումը: Բացի այդ, վերաքննիչ դատարանում բողոքների քննության ժամկետի ողջամտությունն ապահովելու համար նպատակահարմար է ՔԳՕ 233-րդ հոդվածի 2-րդ մասում և 234-րդ հոդվածների 2-րդ մասում սահմանել նաև վճարել բողոքը վերադարձնելու կամ բողոքը վարույթ ընդունելու մասին որոշումները գործին մասնակցող անձանց ուղարկելու կոնկրետ ժամկետներ:

23. Վերաքննիչ քաղաքացիական դատարանի լիազորություններն ըստ ուղղվածության կարելի է դասակարգել առարկայականի և գործառութայինի, առարկայական լիազորությունների շարքում առանձնացնելով գործն ըստ էության լուծող և չլուծող դատական ակտերի վերաքննության արդյունքում կիրառվող լիազորությունները, իսկ գործառութային լիազորությունները պայմանականորեն բաժանելով կազմակերպական-նախապատրաստական և արգելող լիազորությունների: Ըստ կիրառման բնույթի՝ վերաքննիչ դատարանի լիազորությունները լինում են հայեցողական և ոչ հայեցողական: Անհրաժեշտ է վերանայել վերաքննիչ դատարանի լիազորությունների շրջանակը, մասնավորապես՝

- վերաքննիչ դատարանը պետք է հնարավորություն ունենա բացառիկ դեպքերում պատճառաբանել առաջին ատյանի դատարանի՝ գործն ակնհայտորեն ճիշտ լուծող, սակայն չպատճառաբանված դատական ակտը, երբ վճռի էությունից ակնհայտորեն բխում է դրա կոնկրետ պատճառաբանությունը, և եթե դա բխում է արդարադատության արդյունավետության շահերից,

- վերաքննիչ դատարանին պետք է վերապահել վերաքննիչ բողոքը բավարարելու և թերի կամ սխալ պատճառաբանված դատական ակտը պատճառաբանելու լիազորություն,

- վերաքննիչ դատարանին պետք է վերապահել նոր փաստ հաստատելու և ստորադաս դատարանի ակտը մասնակիորեն բեկանելու և փոփոխելու լիազորություն,



• ՀՀ ՔԳՕ 221 հոդվածի 1-ին մասի 5-րդ կետում պետք է ուղղակիորեն սահմանել դիմումն առանց քննության թողնելու, իսկ 2-րդ մասում՝ միջանկյալ դատական ակտերը վերացնելու՝ վերաքննիչ դատարանի իրավագործությունները,

• ՀՀ ՔԳՕ 221-րդ հոդվածի 3-րդ մասում անհրաժեշտ է վերացնել «կարող է» ձևակերպումը, ինչը հնարավորություն կտա հստակություն մտցնել, թե վերաքննիչ դատարանը երբ է պարտավոր, և երբ իրավունք ունի կասեցնել գործի վարույթը,

• վերաքննիչ դատարանին պետք է վերապահել սեփական որոշումները պարզաբանելու, թույլ տրված վրիպակները, գրասխալները և թվաբանական սխալները ուղղելու, ինչպես նաև լրացուցիչ որոշում կայացնելու լիազորություն:

Հետևաբար ՀՀ ՔԳՕ-ի՝ վերաքննության վարույթը կարգավորող նորմերին զուգահեռ նպատակահարմար է առանձին հոդվածով նախատեսել, որ՝

«1. Վերաքննիչ դատարանն իրավունք ունի գործին մասնակցող անձանց դիմումով կամ իր նախաձեռնությամբ լրացուցիչ որոշում կայացնել, եթե՝ ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանել է դատական ակտը և հաստատել է կողմերի հաշտության համաձայնությունը և չի լուծել դատական ծախսերի հարցը, կամ ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանել է դատական ակտը և կարճել է գործի վարույթն ամբողջովին կամ դրա մի մասը կամ առանց քննության է թողել հայցն (դիմումն) ամբողջովին կամ դրա մի մասը և չի լուծել դատական ծախսերի հարցը, կամ մասնակիորեն բեկանել և փոփոխել է ստորադաս դատարանի ակտը, սակայն՝

ա) որոշում չի կայացրել որևէ պահանջով, որը ստորադաս դատարանում քննության առարկա է հանդիսացել,

բ) լուծելով իրավունքի մասին հարցը, չի նշել հատկացվող գումարի չափը, հանձման ենթակա գույքը կամ այն գործողությունները, որոնք պարտավոր է կատարել պատասխանողը,

գ) չի լուծել դատական ծախսերի հարցը:

2. Լրացուցիչ որոշում կայացնելու մասին դիմումը կարող է ներկայացվել որոշումը գործին մասնակցող անձանց կողմից ստանալուց հետո՝ 30 օրյա ժամկետում, սակայն ոչ ուշ, քան մինչև որոշման ուժի մեջ մտնելը:

3. Լրացուցիչ որոշում կայացնելու մասին հարցը լուծվում է դատական նիստում: Գործին մասնակցող անձինք պատշաճ ձևով տեղեկացվում են դատական նիստի վայրի և ժամանակի մասին: Նրանց չներկայանալն արգելք չէ հարցի քննարկման համար:

4. Լրացուցիչ որոշում կայացնելը մերժելու մասին դատարանը կայացնում է որոշում, որը գործին մասնակցող անձանց կողմից կարող է բողոքարկվել հրապարակման պահից 30 օրյա ժամկետում»:

24. Նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով դատական ակտի վերանայման պարագայում ՀՀ վերաքննիչ դատարանը պետք է ունենա վերաքննիչ բողոքը բավարարելու և վերանայվող դատական ակտն անփոփոխ թողնելու լիազորություն:

25. Վերաքննիչ ատյանի դատարանն իրավասու է ստուգել նաև դատական հայեցողության շրջանակներում կայացված առաջին ատյանի դատարանի ակտերի օրինականությունը, որոշել, թե դատական հայեցողությունը՝ որպես իրավակիրառ գործունեության տեսակ, որքանով է համապատասխանում անձի դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքի տարրերին և նման հայեցողության դրսևորումն ինչ ազդեցություն է ունեցել գործի ելքի վրա:

26. Գտնում ենք, որ նպատակահարմար է հստակ սահմանազատել վերաքննիչ բողոքարկման, դատական ակտերի վերանայման և բեկանման հիմքերը՝ բողոքարկման հիմք համարելով նյութական և դատավարական իրավունքի նորմերի յուրաքանչյուր

խախտում, որը բողոքարկողի կարծիքով պարունակում է իր համար անբարենպաստ հետևանքներ և կարող է հանգեցնել դատական ակտի բեկանման, ինչպես նաև նոր կամ նոր երևան եկած հանգամանքները դիտարկել զուտ որպես դատական ակտի վերանայման հիմք:

27. Պետք է տարանջատել «դատական սխալ» և «արդարադատության սխալ» հասկացությունները՝ դատական սխալ համարելով գործի ելքի վրա ազդող նյութական կամ դատավարական իրավունքի նորմերի խախտումները: Արդարադատության սխալի պարագայում, թեև առկա չեն գործի ելքի վրա ազդող նյութական կամ դատավարական իրավունքի նորմերի խախտումներ, սակայն չեն իրացվում արդարադատության վերջնական նպատակները՝ խախտված կամ վիճարկվող սուբյեկտիվ իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը: ՀՀ դատավարության օրենսդրությունը դատական ակտի բեկանումը հնարավոր է համարում նաև դատական սխալի՝ նյութական կամ դատավարական իրավունքի նորմերի խախտումների բացակայության պայմաններում:

28. Գտնում ենք, որ ՔԴ-Օ 227-րդ հոդվածով նախատեսված իրավակարգավորումը թերի է, և հոդվածում տեղ գտած «իրավական այլ ակտը» ձևակերպմանը պետք է ավելացնել «կամ գործարար շրջանառության սովորույթը» արտահայտությունը, ինչը կվերացնի գործարար շրջանառության սովորույթների սխալ կիրառման և մեկնաբանման դեպքում դատական ակտի բեկանման հիմքերի շրջանակում առկա բացը: ՀՀ ՔԴ-Օ 204<sup>33</sup>-րդ հոդվածի 1-ին մասում «օրենք» բառից հետո պետք է ավելացնել «կամ այլ իրավական ակտը» բառակապակցությունը:

29. ՀՀ ՔԴ-Օ 204<sup>33</sup>-րդ հոդվածի 1-ին մասը պետք լրացնել հետևյալ խմբագրությամբ. «Նոր հանգամանքները հիմք են դատական ակտի վերանայման համար, եթե ՀՀ վարչական դատարանը տվյալ քաղաքացիական գործով դատարանի կիրառած նորմատիվ իրավական ակտի դրույթն ամբողջությամբ կամ մասնակիորեն ճանաչել է անվավեր»:

30. ՀՀ ՔԴ-Օ 228-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետում պետք է որպես դատական ակտի անվերապահ բեկանման հիմք նախատեսել նաև. «եթե ձայնային արձանագրումը և համակարգչային համառոտագրումը չեն համապատասխանում միմյանց, ինչպես նաև դատական նիստի արձանագրումն իրականացվել է այնպիսի էական թերություններով, ինչը լիարժեք հնարավորություն չի տալիս դատարանին՝ ստուգելու ստորադաս դատական ատյանում գործի քննության ընթացքում կատարված գործողությունները»: Բացի այդ, ՀՀ ՔԴ-Օ 228-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետում խոսվում է միայն դատական նիստի արձանագրության մասին, մինչդեռ՝ ՔԴ-Օ 147-րդ հոդվածի ուժով արձանագրություն է վարվում նաև դատական նիստերից դուրս առանձին դատավարական գործողությունների կատարման պարագայում: Դատավարության մասնակիցներին պետք է հնարավորություն ընձեռել դիտողություններ ներկայացնել ինչպես պարզ թղթային, այնպես էլ ձայնային-համակարգչային արձանագրությունների ճշտության վերաբերյալ, հատկապես, երբ խոսք է գնում դրանցում առկա անհամապատասխանությունների մասին:

31. Դատավարության օրենքի վերլուծության արդյունքում կարող ենք առանձնացնել նաև դատական ակտի պարտադիր բեկանման հիմքերը (երբ առկա են քաղաքացիական դատավարությունը բացառող հանգամանքներ, սակայն դատարանը չի մերժել հայցադիմումի ընդունումը (հոդվ. 91) կամ չի կարճել գործի վարույթը և վճիռ է կայացրել (հոդվ. 109), կամ գործին մասնակցող անձն իրենից անկախ հանգամանքներով չի ներկայացրել գործի լուծման համար էական նշանակություն ունեցող ապացույց (հոդվ. 219, մաս 2), կամ վճիռ է կայացրել գործին մասնակից չդարձված անձի իրավունքների և պարտականությունների վերաբերյալ: Դատական ակտի պարտադիր բեկանման հիմքե-

որը դատավարական իրավունքի նորմերի այնպիսի խախտումներ են, որոնք բոլոր դեպքերում ազդում կամ կարող են ազդել գործի ելքի վրա: Դատական ակտի անվերապահ բեկանման հիմքերը դատավարական իրավունքի նորմերի այնպիսի խախտումներ են, որոնք, անկախ գործի ելքի վրա ազդեցությունից, ինչպես նաև ստորադաս դատարանի կողմից գործն ըստ էության ճիշտ լուծելու հանգամանքից, հանգեցնում են վճռի բեկանման:

32. Գտնում ենք, որ նպատակահարմար է վերանայել բեկանման ենթակա «անօրինական դատական ակտ» հասկացությունը, որը հիմնված է «իրավունք» և «օրենք» եզրույթների վերլուծության պոզիտիվիստական մոտեցման վրա՝ փոխարենն օգտագործելով «ոչ իրավական դատական ակտ» հասկացությունը, ինչն առավելապես կհամապատասխանի Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքում ձևավորված իրավունքի գերակայության սկզբունքին, այն է՝ դատարանները չպետք է կիրառեն այն օրենքը կամ այլ իրավական ակտը, որոնք հակասում են իրավունքի գերակայության գաղափարին և մարդու իրավունքների համընդհանուր սկզբունքներին: Հետևում է՝ այն դատական ակտերը, որոնք թեև կայացվել են նյութական և դատավարական իրավունքի նորմերի (օրենքի պահանջների) այնպիսի խախտումներով, որոնք չեն հանգեցրել քաղաքացիական գործի սխալ լուծման, համապատասխանում են մարդու իրավունքների համընդհանուր սկզբունքներին և իրավունքի գերակայության գաղափարին, սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության տեսանկյունից ճիշտ են և արդարացի՝ ոչ մի դեպքում ենթակա չեն բեկանման:

33. Դատական ակտի անվերապահ բեկանման հիմքերի առկայության դեպքում վերաքննիչ դատարանը պետք է հնարավորություն ունենա բոլոր դեպքերում բեկանել ստորադաս դատարանի դատական ակտը՝ դուրս գալով վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններից:

34. ՀՀ ԶԴՕ անհրաժեշտ է ներդնել դատական ակտերի դասակարգման եռաստիճան համակարգ՝ առանձնացնելով գործն ըստ էության լուծող, գործը լուծող և միջանկյալ դատական ակտերը, ինչը հնարավորություն կընձեռի հստակեցնել վերադաս դատարանների որոշումների տեղը դատական ակտերի համակարգում: Ընդ որում, որպես ելակետ պետք է ընդունել, այն հանգամանքը, որ գործն ըստ էության լուծող դատական ակտերը միաժամանակ ուղղված են և վիճելի նյութական իրավահարաբերությունների, և դատավարական իրավահարաբերությունների կարգավորմանը, այն է՝ քաղաքացիական գործի իրավաբանական ճակատագիրը որոշելուն: Գործը լուծող դատական ակտերը միայն որոշում են քաղաքացիական գործի իրավաբանական ճակատագիրը, կարգավորում են դատավարական հարաբերությունները՝ առանց նյութական իրավահարաբերություններին անդրադառնալու: Հետևաբար լրացուցիչ պետք է պարզաբանել նաև, թե որ դեպքում վերաքննիչ դատարանի որոշումը կարող է լինել գործը լուծող կամ գործն ըստ էության լուծող, որ դեպքում՝ միջանկյալ:

Վերջնական են վերաքննիչ դատարանի այն որոշումները, որոնք արտահայտում են վերաքննիչ դատարանի վերջնական եզրահանգումներն ու դատողությունները վերաքննիչ բողոքարկման արդյունքում վերանայվող դատական ակտի օրինականության ու հիմնավորվածության վերաբերյալ կամ որոշակիորեն լուծում են վերաքննիչ դատարանի վարույթում գտնվող քաղաքացիական գործը՝ կարգավորելով այս ատյանում ծագած իրավահարաբերությունները, եզրափակում են գործի քննությունը՝ ավարտին հասցնելով գործով վերաքննիչ դատարանի դատական գործունեությունը:

Վերաքննիչ դատարանի միջանկյալ դատական ակտերն այն որոշումներն են, որոնք ուղղված են վերաքննիչ վարույթի հարուցման, նախապատրաստման, ինչպես նաև

բուն վերաքննության ընթացքում միջանկյալ դատավարական հարցերի (խնդիրների) լուծմանը:

Գտնում ենք, որ գործը լուծող դատական ակտ կարելի է համարել միայն ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերի վերաքննության արդյունքում կայացվող որոշումը, որն արտացոլում է վերանայվող դատական ակտի օրինականության ու հիմնավորվածության վերաբերյալ վերաքննիչ դատարանի վերջնական եզրահանգումներն ու հրամայական դատողությունները, եզրափակում է կոնկրետ քաղաքացիական գործով վերաքննիչ դատարանի դատական գործունեությունը և ուղղված չէ վիճելի նյութական իրավահարաբերությունը կարգավորելուն: Գործն ըստ էության լուծող կարող է համարվել միայն դատական ակտի վերանայման արդյունքում վիճելի նյութական իրավահարաբերությունների կարգավորմանն ուղղված՝ վերաքննիչ դատարանի որոշումը:

35. Վերաքննիչ դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերի վերաքննության արդյունքում կայացվող որոշումներին լրացուցիչ կարելի է իրավական նպատակահարմարության պահանջ ներկայացնել: Վերաքննիչ դատարանը, կաշկանդված չլինելով վերաքննիչ բողոքում ներկայացված պահանջով, ինքնուրույն է որոշում, թե ՀՀ ԶԳ-Օ 221-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված լիազորություններից որ մեկն է առավել նպատակահարմար կիրառել սուբյեկտիվ իրավունքների արդյունավետ պաշտպանությունն իրականացնելու նպատակով: Հետևաբար, վերաքննիչ դատարանը պետք է կայացնի այնպիսի որոշում, որն անպայմանորեն առավելագույնս պետք է նպատակահարմար լինի սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության և արդարադատության արդյունավետության ապահովման տեսանկյունից:

36. Գտնում ենք, որ ԶԳ-Օ 91-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում և 109-րդ հոդվածի 2-րդ մասում «օրինական ուժի մեջ մտած վճիռ» բառակապակցության փոխարեն պետք է օգտագործել «օրինական ուժի մեջ մտած դատական ակտ» ձևակերպումը, ինչը հնարավորություն կընձեռի իրավակարգավորման շրջանակ ընդգրկել բացառիկության հատկանիշով օժտված բոլոր դատական ակտերը:

37. Գտնում ենք, որ ՀՀ ԶԳ-Օ 52-րդ հոդվածի 2-րդ մասում «օրինական ուժի մեջ մտած վճռով հաստատված հանգամանքների» արտահայտության փոխարեն պետք է օգտագործել «օրինական ուժի մեջ մտած դատական ակտով հաստատված հանգամանքներ» արտահայտությունը, ինչը կենթադրի նաև վերաքննիչ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած որոշումների նախադատելիության հատկանիշը:

38. Անհրաժեշտ է դատավարության օրենսգիրք ներդնել վերաքննիչ (վերադաս) դատարանի կողմից բեկանված մասով գործերի նոր քննության վարույթ, սահմանելով գործերի քննության այնպիսի կանոններ, որոնք կապահովեն վերաքննիչ դատարանի կողմից վճիռը բեկանելու դեպքում գործը նոր քննության ուղարկելու դատավարական ժամկետները, ստորադաս դատարանի կողմից գործը վարույթ ընդունելու մասին որոշման կայացման դատավարական կարգը, ստարադաս դատարանում նախկինում գործի քննությանը մասնակցած դատավորի կողմից գործի նոր քննությանը մասնակցելու արգելքը, ինչպես նաև գործի քննության սահմանները, այն է՝ պետք է սահմանափակել հայցի առարկան կամ հիմքը փոխելուն, վերադաս դատական ատյանի կողմից գործի փաստական և իրավական հանգամանքների վերաբերյալ արտահայտած դիրքորոշումը շրջանցելուն ուղղված դատավարական գործողությունները, բացառել նոր ապացույցներ ներկայացնելու հնարավորությունը, եթե դա պայմանավորված չէ դատարանի կողմից ապացուցման պարտականությունը բաշխելիս նոր փաստ ապացուցելու անհրաժեշտությամբ:

**Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ գիտական հրապարակումներում.**

**ա) մենագրություններ.**

1. Քաղաքացիական գործերով դատական վերանայման ինստիտուտի զարգացման հիմնախնդիրները Հայաստանում // ԵՊՀ հրատ., Երևան, 2011, 256 էջ,
2. Վերաքննության կարգով դատական ակտերի վերանայման հիմնախնդիրները քաղաքացիական դատավարությունում // ԵՊՀ հրատ., Երևան, 2013, 544 էջ:

**բ) գիտական հոդվածներ և միջազգային գիտական համաժողովներում ներկայացված թեզիսներ.**

1. Վերաքննիչ բողոքարկման իրավունքը որպես քաղաքացիական դատավարությունում արդար դատաքննության իրավունքի ապահովման միջոց// Սահմանադրական դատարան, Տեղեկագիր թիվ 3(60), Երևան, 2011, էջեր 14-27,
2. Քաղաքացիական գործերով դատական վերանայման ինստիտուտի ձևավորման և զարգացման հիմնական միտումները միջնադարյան և նոր շրջանի Եվրոպայում // Պատմություն և մշակույթ, Հայագիտական հանդես, Բ, Երևան, 2011, էջեր 82-100,
3. Վերաքննիչ բողոքարկման իրավունքի օբյեկտը ՀՀ քաղաքացիական դատավարությունում // Բանբեր Երևանի համալսարանի, թիվ 135.3, Երևան, 2011, էջեր 52-68,
4. Վերաքննիչ բողոքարկման իրավունքի սուբյեկտները // Օրինականություն, թիվ 66, Երևան, 2011, էջեր 24-31,
5. Վերաքննիչ բողոքարկման իրավունքի իրականացման կարգը քաղաքացիական դատավարությունում // Օրենք և իրականություն, N8(190), Երևան, 2011, էջեր 7-10,
6. Վերաքննիչ բողոքարկման կարգը խախտելու քաղաքացիադատավարական հետևանքները // Բանբեր Երևանի համալսարանի, թիվ 136.3, Երևան, 2011, էջեր 50-62,
7. Վերաքննիչ դատարանի լիազորությունների իրավաբանական բնույթի հիմնախնդիրները // Օրենք և իրականություն, N1(195), 2012, Երևան, էջեր 5-9,
8. Վերաքննիչ դատարանի որոշումների դասակարգման հիմնախնդիրները քաղաքացիական դատավարությունում // ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտաժողովի նյութերի ժողովածու, Երևան, ԵՊՀ հրատ., 2012, էջեր 430-459,
9. Վերաքննիչ դատարանի որոշումների օրինական ուժը // Օրինականություն, թիվ 69, Երևան, 2012, էջեր 40-49,
10. Համատեղ վերաքննության հիմնախնդիրները ՀՀ քաղաքացիական դատավարությունում // Բանբեր Երևանի համալսարանի, թիվ 137.3, Երևան, 2012, էջեր 40-54,
11. Վերաքննության էության և նպատակային նշանակության խնդիրները քաղաքացիական դատավարությունում // Դատական իշխանություն, 11/150, Երևան 2012, նոյեմբեր, էջեր 62-66,
12. Դիրքորոշումը հայտնելու պարտադիրությունը որպես քաղաքացիական դատավարությունում ոչ լրիվ վերաքննության սահմանների ապահովման իրավական միջոց // Դատական իշխանություն, 5/154, Երևան, 2012, մայիս, էջեր 20-26,
13. Վերաքննիչ դատարանի գործառության լիազորությունների դասակարգման հիմնախնդիրները ՀՀ քաղաքացիական դատավարությունում // Բանբեր Երևանի համալսարանի, թիվ 138.3, Երևան, 2012, էջեր 15-28,
14. Վերաքննիչ դատարանի առարկայական լիազորությունների դասակարգման հիմնախնդիրները ՀՀ քաղաքացիական դատավարությունում // Դատական իշխանություն, 10/159, Երևան 2012, հոկտեմբեր, էջեր 32-44,
15. Նյութական իրավունքի նորմերի սխալ կիրառումը որպես դատական ակտը վերաքննության կարգով բեկանելու հիմք// Դատական իշխանություն, թիվ 12/161, Երևան,

- 2012, դեկտեմբեր, էջեր 74-79,
16. Տնօրինչականության սկզբունքի գործառության քաղաքացիադատավարական առանձնահատկությունները դատական ակտերի վերաքննության փուլում // Բանբեր Երևանի համալսարանի, թիվ 140.3, Երևան, 2013, էջեր 15-25,
  17. Վերաքննիչ դատարանի ակտերին ներկայացվող ձևական պահանջների հիմնախնդիրները քաղաքացիական դատավարությունում // Դատական իշխանություն, թիվ 1/162, Երևան, 2013, հունվար, էջեր 74-80,
  18. Վերաքննիչ դատարանի ակտերին ներկայացվող էական պահանջների տարանջատման հիմնախնդիրները քաղաքացիական դատավարությունում // Դատական իշխանություն, թիվ 4/165, Երևան, 2013, ապրիլ, էջեր 26-34,
  19. Վերաքննիչ դատարանի ակտերին ներկայացվող որոշակիության, անպայմանականության, լրիվության և նպատակահարմարության պահանջների տարանջատման անհրաժեշտությունը քաղաքացիական դատավարությունում // Դատական իշխանություն, թիվ 6/167, Երևան, 2013, հունիս, էջեր 72-78,
  20. Քաղաքացիական գործերով դատական ակտերի վերաքննության ինստիտուտը «Դատաստանագիրք Աստրախանի Հայոց» - ում // ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտաժողովի նյութերի ժողովածու, ԵՊՀ հրատ, 2013, էջեր 29-40,
  21. Դատական ակտերի վերանայման (վերաքննության) ինստիտուտի գործառնությունը հին հռոմեական իրավունքում // Բանբեր Երևանի համալսարանի, թիվ 1 (142), Երևան, 2014, էջեր 13-24,
  22. Վերադաս դատարանի կողմից բեկանված մասով գործերի նոր քննության վարույթի ներդրման անհրաժեշտությունը ՀՀ քաղաքացիական դատավարությունում // Դատական իշխանություն, թիվ 10/184, Երևան, 2014, էջեր 45-49:  
Օտար լեզվով`
  23. Возникновение института содебного пересмотра в гражданском судопроизводстве Армении раннего периода // Актуальные проблемы экономики и права, N 3(23), Июль-сентябрь, 2012, էջեր 204-210,
  24. Нарушение положений международных договоров Республики Армения как основание для отмены судебных актов в апелляционном порядке // Вопросы экономики и права, N 10, Москва, 2012, էջեր 27-33,
  25. Судебная ошибка как основание для отмены судебного акта и ее правовое воздействие в вопросе определения нарушений права на справедливое судебное разбирательство // Закон и право, N 03, 2013, Москва, էջեր 60-65,
  26. Основные проблемы отмены судебных актов в апелляционном порядке // Вопросы экономики и права, N 4, Москва, 2013, էջեր 40-48,
  27. Судебная ошибка как основание для отмены судебного акта // Актуальные проблемы экономики и права, N 2(26), Апрель-июнь, 2013, էջեր 170-176,
  28. Проблемы класификации оснований для отмены судебного акта в порядке апелляции в гражданском судопроизводстве Республики Армения // Вопросы экономики и права, N 10, Москва, 2013, էջեր 35-45,
  29. Гражданско-процессуальные вопросы применения оснований безоговорочной и обязательной отмены судебных актов на стадии апелляции в Республике Армения // Актуальные проблемы экономики и права. 2014. N 4 (32), էջեր 307-313,
  30. Particularities of the operation principle of competition in the phase of appeals// Materials of conference devoted to 80-th anniversary of the faculty of law of the Yerevan state university, YSU Press, էջեր 273-286:

**ПРОБЛЕМЫ ПЕРЕСМОТРА СУДЕБНЫХ АКТОВ В АПЕЛЛЯЦИОННОМ ПОРЯДКЕ В ГРАЖДАНСКОМ СУДОПРОИЗВОДСТВЕ РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ**

Диссертация на соискание ученой степени доктора юридических наук посвящена одному из важнейших институтов гражданского судопроизводства – всестороннему изучению и анализу проблем пересмотра судебных актов в апелляционном порядке.

Проблемы апелляционного пересмотра в гражданском судопроизводстве всегда находились в центре внимания ученых-процессуалистов, в рамках кандидатских и докторских диссертаций они исследовались российскими учеными как дореволюционного, так и советского периода, а также современными отечественными и зарубежными авторами.

Тем не менее, действующий сегодня в правовой системе Республики Армения институт апелляции по гражданским делам пока не вполне изучен, и не существует всеохватывающих научных работ относительно данного вопроса, что обусловлено фактом переосмысления апелляционного производства в результате непрекращающихся изменений гражданско-процессуального законодательства.

Актуальность темы обусловлена еще и тем, что Европейский суд по правам человека и Конституционный суд РА рядом своих решений выразили принципиальные правовые позиции относительно отдельных вопросов и сущности производства по пересмотру судебных актов в порядке апелляции, которые в полной мере не отражены в действующем законодательстве. Между тем, раскрытие проблем пересмотра судебных актов в апелляционном порядке в гражданском судопроизводстве, оценка его особенностей в правоприменительной практике и правового регулирования этого института в соответствии с принятыми РА международными обязательствами, с решениями Конституционного суда и Кассационного суда РА требуют серьезного анализа.

Исходя из актуальности темы, целью исследования стали системное изучение и анализ апелляционной модели в гражданском судопроизводстве Армении, выявление теоретических и практических проблем в данной сфере, на основе результатов проведенных комплексных исследований выработка предложений по совершенствованию положений гражданско-процессуального законодательства, регулирующего производство по пересмотру судебных актов в апелляционном порядке, которые помогут привести указанный институт в соответствие с концепциями права на судебную защиту и справедливое судебное расследование, а также обеспечат его закрепление и развитие.

В рамках диссертации автор проанализировал особенности, преимущества и недостатки одного из видов апелляции, применяемого в гражданском

судопроизводстве Армении. Особого внимания автора удостоились проблемы сущности права на апелляционное обжалование, а также правовые предпосылки осуществления права на обжалование и гражданско-процессуальные последствия их нарушения.

Следует отметить, что автор не только провел всесторонний анализ сложившихся в процессуальной науке основных подходов к институту апелляции, но и предложил новые концептуальные подходы и решения для повышения эффективности данного вида производства по пересмотру судебных актов, которые преимущественно будут направлены на защиту субъективных прав участвующих в деле лиц и обеспечение законности рассмотрения дел в нижестоящей судебной инстанции. В результате анализа гражданско-процессуального законодательства РА в работе выделены виды совместной и встречной неполной апелляции, в контексте разделения понятий объекта и предмета апелляции выявлены границы апелляционного пересмотра, значение права на апелляционное обжалование в механизмах судебной защиты права на справедливое судебное разбирательство.

В данной работе отдельно рассмотрены и оценены проблемы полномочий апелляционного суда, правового характера и классификации его решений, выявлены особенности их правового действия, а также проанализированы основания для отмены судебных актов в апелляционном порядке, основные проявления их применения в судебной практике. Автором особо подчеркнута, что непременно нужно пересмотреть рамки предметных полномочий апелляционного суда и предоставить ему возможность применения таких средств процессуального воздействия, которые смогут устранить судебную ошибку и непосредственно будут направлены на защиту субъективных материальных и процессуальных прав участников гражданского дела. Причем, в плане исключения возможности повторения судебной ошибки в процессе нового разбирательства дел по отмененной части, в рамках диссертации предложены правила нового рассмотрения дела, которые отличаются от общих правил осуществления производства в суде первой инстанции.

В результате исследований, проведенных в рамках диссертации, автором выявлены существующие в этом институте проблемы, в итоге, путем обобщения различных правовых актов, составляющих отечественную правовую систему, в том числе – положений международных договоров, правовых позиций, отраженных в актах Европейского суда по правам человека, Конституционного суда РА, Кассационного суда РА, представлены как теоретические выводы, так и предложения по устранению недостатков, существующих в законодательстве и правоприменительной практике РА.



**PROBLEMS OF APPEAL REVIEW OF JUDICIAL ACTS IN THE CIVIL  
PROCEDURE OF THE REPUBLIC OF ARMENIA**

**SUMMARY**

The dissertation for acquiring scientific degree of jurisprudence doctor is devoted to complex examination and analyses of one of the most important institutions of civil procedure - the problems of appeal review of judicial acts.

Problems of appeal review have always been under attention of procedural law specialists. These issues have been scrutinized within candidate and doctoral dissertations both by authors of Soviet time Russia and modern Armenian and foreign authors.

However, within the legal system of the Republic of Armenia current institution of appeal review of civil cases is not thoroughly examined, and comprehensive studies do not exist. Such a situation is mostly connected with continuous amendments of the civil procedural legislation and, in this light, reevaluation of appeal review procedure.

The actuality of the topic is reasoned also by the fact, that European Court of Human Rights and the Constitutional Court of RA have expressed principal legal statements on the essence and certain issues regarding the procedure of appeal review of judicial acts which are not fully reflected in the current national legislation. However, identification of the problems of appeal review of judicial acts in civil procedure, legal regulation and due evaluation of this institution and its peculiarities within the international obligations of RA, decisions of RA Constitutional Court and RA Cassation Court require comprehensive analyses.

Based on the actuality of the topic, the study is aimed at systemic examination and analyses of the review model within the civil procedure of Armenia, revealing theoretical and practical problems, elaboration of suggestions for amending relevant provisions of national civil procedural legislation regulating appeal review of judicial acts. These suggestions are supposed to advantage making the given institution sound with the rights of judicial protection and fair trial as well as ensuring its functioning and further development.

Within the dissertation the author comprehensively analyses the peculiarities of the review type applied in the Armenian civil procedure, its advantages and disadvantages. The author devotes special attention to the essential problems of the right to appeal review as well as the legal preconditions of realizing this right and its civil procedural consequences.

The author has not only comprehensively analyzed the main approaches on appeal review institution known in civil procedural science, but also has drawn up new conceptual approaches and solutions to enhance the efficiency of this kind appeal review aimed at protection of subjective rights of persons involved in the case and ensuring lawfulness of court hearings at lower instances. In the result of analyses of Civil Procedural Code of RA the types of joint and counter non-complex appeal have been distinguished, the margins of appeal review and the role of the right to appeal review within the judicial protection of the right to fair trial, in the context of distinction of notions appeal object and subject have been identified.

In this study the powers of appeal court, legal character and problems of classification of the court decisions have been subject to special examination and evaluation. The peculiarities of legal functioning thereof have been revealed, and grounds for overturn of judicial acts in appeal review, their main reflections in the judicial practice have been analyzed.

The author especially underlines the absolute necessity of reviewing the scope of subjective powers of the appeal court and reserving it with such means of procedural influence that will remit the judicial mistake and be directly aimed at protection of material and procedural rights of the civil circulation participants. Furthermore, to exclude the possibility of repeat of judicial mistake during the new hearing of cases in overturned part, new rules of court hearing have been introduced which are different from the general ones applied in first instance court.

In the result of study within the dissertation, the author has identified problems of this institution, summarizing the relevant provisions of national legal system, including international agreements, legal statements reflected in the decisions of ECHR, RA Constitutional Court, RA Cassation Court. The author has introduced both theoretical conclusions and suggestions aimed at rectifying the shortcoming in the legislation of RA and law-enforcement practice.